Ազգ
Azg
1 ՓԵՏՐՈՒԱՐ 2012 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 17(4869)
ISSN: 1829-1651

# Սարկոզի՞ն ուշացրեց, թե՞ սենատորները շտապեցին

Դեռեւս նախորդ շաբաթավերջին ֆրանսիացի թուրքամետ պատգամավոր Նատալի Գյուլեի՝ հունվարի 23-ին ֆրանսիական Սենատում ընդունված ցեղասպանությունների հերքումը քրեականացնող օրենքը սահմանադրական դատարան բողոքարկելու նախաձեռնությունը հավաքել էր զգալի պակաս, քան պահանջվող 60 ստորագրությունն է:

Ակնհայտորեն այդ ստորագրությունները ապահովելու հարցում թուրքական կողմն ամեն տեսակ «աջակցություն» է տրամադրել Գյուլեին, ընդ որում, հետաքրքրական կլիներ իմանալ, թե ընդհանուր առմամբ ի՞նչ է արժեցել ոչ թե 60, այլ 72 ստորագրության ձեռքբերումը, ինչ հիմքով էլ Սենատի ընդունած օրենքը, միջազգային լրատվամիջոցների տեղեկացմամբ, արդեն բողոքարկվել է Սահմանադրական դատարան:

Ստորագրությունների հեղինակները հիմնականում ձախ ծայրահեղական ընկալվող Եվրոպական ժողովրդավարական եւ սոցիալական միավորման անդամներն են, ֆրանսիական աղբյուրների ներկայացմամբ՝ նախաձեռնությունն էլ միավորման նախագահ ժակ Մեզարինն է, թեեւ ստորագրություն են տվել նաեւ իշխող կուսակցության ու ընդդիմադիր սոցիալիստներին ներկայացնող սենատորներ եւս:

Ըստ դիմումատուների, օրենքը իբր հակասում է Ֆրանսիայի սահմանադրության 33 հոդվածին եւ խոսքի ազատության իրավունքին: Մինչդեռ հիշեցնենք, որ անգամ Եվրոպայի խորհրդի մարդու իրավունքների հանձնակատար Թոմաս Համմարբերգի գնահատմամբ, այս պարագայում հարցը ոչ թե խոսքի ազատությանն է վերաբերում, այլ ատելության տարածմանը: Այդուհանդերձ, հունվարի 30-ին դիմումն ընդունվել է Սահմանադրական դատարանի կողմից,

Ինչեւէ, չի ուշացել Թուրքիայի վարչապետի եւ արտգործնախարարի շնորհակալությունը դիմումը ստորագրած սենատորներին: Ամեն դեպքում, ինչպես ստորագրողները, այնպես էլ այդ նախաձեռնությանը չմիացած սենատորները առավելագույնը կսպասեն մեկ ամիս, որի ընթացքում Սահմանադրական դատարանը պետք է վճիռ կայացնի:

Ֆրանսիայի Սահմանադրական դատարանն ընդհանրապես որոշումներ կայացնում է այնպիսի օրինագծերի նկատմամբ, որոնք արդեն քվեարկվել են խորհրդարանում, սակայն դեռեւս չեն վավերացվել նախագահի կողմից: Այսինքն՝ կարելի է ենթադրել, որ եթե մինչ դիմումի ներկայացումը Ֆրանսիայի նախագահ Նիկոլա Սարկոզին վավերացրած լիներ օրենքը, այն այլեւս չէր կարող ներկայացվել Սահմանադրական դատարան, քանի որ գործող օրենքների առնչությամբ Ֆրանսիայի այս ատյանը որոշումներ չի կայացնում, օրենքների կիրառումը չի կասեցնում:

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# «Բանակը պետք է մաքրել գողական, փողոցային բարքերից»

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ



«Ինձ համար այլեւս անընդունելի է ասել, թե բոլոր երկրների բանակներում էլ տեղի են ունենում պատահարներ, ինձ համար այլեւս անընդունելի է «բանակը հասարակության հայելին է» արտահայտությունը: Մենք ձգտելու ենք այնպիսի աշխատանք իրականացնել, որպեսզի մաքրենք այն ճանապարհը, որով հասարակությունից գողական, փողոցային բարքերը մուտք են գործում բանակ, որովհետեւ բանակում իրավիճակը՝ կանոնադրական համապատասխան պայմանները, ռեժիմը հնարավորություն են տալիս, որպեսզի ավելի արագ այս բացասական երեւույթների դեմ պայքարենք»: Խոսքերը ՀՀ պաշտպանության նախարար **Սեյրան Օհանյանինն** են: Վերջինս երեկ Ֆրանսիական համալսարանում ուսանողների հետ հանդիպմանը ներկայացրել է բանակում այսօր տիրող իրավիճակն ու զինված ուժերում արտակարգ պատահարներ ծնող մի քանի պատճառները:

Նախարարի մեկնաբանությամբ՝ շատ երիտասարդներ հասարակությունից գողական, փողոցային բարքերով են գալիս բանակ: Հաճախ զինվորների միջեւ տեղի ունեցող վեճերն ավարտվում են զենքի կիրառմամբ եւ ողբերգական ավարտով: Ըստ նախարարի, մյուս պատճառը անվտանգության կանոնների խախտումն է: «Անձը պետք է տիրապետի զինվորի մասնագիտությանը, սակայն նրանք ծուլանում են, եւ տեղի է ունենում զենքի օգտագործման կանոնների խախտում»: Նախարարի խոսքերով, այժմ քայլեր են իրականացվում նման միջադեպերը բացառելու համար: «Ձեռնարկում ենք բոլոր հնարավոր քայլերը՝ կանխելու փողոցային բարքերի, գողական մտածելակերպի ներթափանցումը բանակ», ասել է ՊՆ ղեկավարը:

Անդրադառնալով Հայաստանի քաղաքականությանը տարածաշրջանում՝ Օհանյանը նշել է, որ այն ուղղահայաց է՝ Ռուսաստան-Վրաստան-Հայաստան-Իրան: Սակայն այդ ուղղահայաց քաղաքականությունն այսօր խնդիրներ ունի՝ Ռուսաստանը Վրաստանի հետ, իսկ Արեւմուտքը՝ Իրանի հետ սրված հարաբերություններ ունեն: Պետության հորիզոնական կապերը՝ Թուրքիա-Հայաստան-Ադրբեջան, դեռ զրոյական են:

Տես էջ 2

# Լեֆոր. «Բանակցությունների ձեւաչափի փոփոխությունը չի կարող արդյունավետ լինել»

Նախագահ Սերժ Սարգսյանը երեկ ընդունել է Եվրոմիության Հարավային Կովկասի եւ Վրաստանի ճգնաժամի հարցերով հատուկ ներկայացուցիչ Ֆիլիպ Լեֆորին:

Ինչպես տեղեկացնում է պաշտոնական հաղորդագրությունը, զրուցակիցները քննարկել են Հայաստան-ԵՄ հարաբերություններին եւ համագործակցության զարգացմանը վերաբերող հարցեր: Հանդիպմանն անդրադարձ է եղել նաեւ Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի կարգավորման գործընթացի վերջին զարգացումներին եւ տարածաշրջանային խնդիրներին:

Ներկայացնելով ԵՄ-ի դիրքորոշումը՝ Ֆիլիպ Լեֆորն ընդգծել է, որ ԼՂ հակամարտության կարգավորումը ԵԱՀԿ Մինսկի խմբի շրջանակներում այլընտրանք չունի, եւ բանակցությունների ձեւաչափի փոփոխությունը չի կարող արդյունավետ լինել:

Լեֆորն այցելելու է նաեւ Ադրբեջան եւ թերեւս հենց այնտեղ կարիք կունենա կրկին ներկայացնելու ԵՄ տեսակետները ԼՂ հարցում:

Ա. Հ.

# Ամենուր ձյուն

«Հայհիդրոմետ» ծառայությունից «**Ազգը**» տեղեկացավ, որ հանրապետության տարածքում փետրվարի առաջին օրերին կշարունակվեն տեղումները: Ջերմաստիճանը հատկապես գիշերային ժամերին կնվազի 8-12 աստիճանով: Փետրվարի 3-5-ը կդիտվի մառախուղ, քամու ուժգնացում մինչեւ 15-20 մ/վրկ, լեռներում եւ լեռնանցքներում սպասվում է բուք: Ամենացածր գիշերային ջերմաստիճան կգրանցվի Շիրակում՝ -18-23՝ մինչեւ փետրվարի 5-ը ներառյալ:

Երեւանում փետրվարի 1-ին եւ 2-ին ժամանակ առ ժամանակ սպասվում են ձյուն եւ ձնախառն անձրեւ: Իսկ 3-ին, 4-ին եւ 5-ին սպասվում է առանց տեղումների եղանակ: Ջերմաստիճանը գիշերը մինչեւ փետրվարի 4-ը կտատանվի -1-ից -10 աստիճանի սահմաններում, ցերեկը՝ -2-4 աստիճան: Փետրվարի 5-ին ջերմաստիճանը 2-ով կբարձրանա դառնալով 0+2 ցերեկը, իսկ գիշերը՝ -8-10 կպահպանվի:

Ս. ՄԱԿԱՐՅԱՆ

# Հայաստանի բնակչության թիվը 3 274 300 է

**Ազգային վիճակագրական ծառայության հրապարակած տվյալների համաձայն՝ այս տարվա հունվարի 1-ի դրությամբ ՀՀ մշտական բնակչության թվաքանակը, ընթացիկ հաշվառմամբ (2001 թ. մարդահամարի հիմքով վարվող), կազմել է 3 մլն 274.3 հազ. մարդ: Այդ թվում՝ քաղաքային բնակչության թիվը կազմել է 2 մլն 096.0 հազ., գյուղականը՝ 1 մլն 178.3 հազ. մարդ: Հունվարի դրությամբ հայաստանի բնակչության 1 մլն 127.3 հազ.-ը բնակվում է մայրաքաղաք Երեւանում: Ըստ ԱՎԾ տվյալների՝ 2011 թվականի հունվարի դրությամբ Հայաստանի մշտական բնակչության թվաքանակն աճել է 11.7 տոկոսով:**

**Նախորդ տարի Հայաստանում ծնելիության ցուցանիշը նվազել է 3.1 տոկոսով՝ ծնվել է 43 447 երեխա: Մահացության ցուցանիշը 2010 թվականի համեմատ 2011-ին աճել է 0.4 տոկոսով: Չնայած դրան, 2011 թվականին ծնվածների թվաքանակը 1.6 անգամ գերազանցել է մահացության ցուցանիշը: Բնական հավելաճի գործակիցը, 1000 բնակչի հաշվով, 2011թ. հունվար-դեկտեմբերին կազմել է 4.7 պրոմիլե՝ 2010 թվականի 5.2 պրոմիլեի փոխարեն:**

# Աբովյան փողոցի մայթը փակող ցանկապատը ե՞րբ է ապամոնտաժվելու



«**Ազգը**» երկու հրապարակում էր նվիրել Աբովյան փողոցի 5 հասցեում մայթը տարիներ շարունակ ցանկապատով փակելուն, որի առնչությամբ քաղաքի գլխավոր ճարտարապետ Նարեկ Սարգսյանը խոստացել էր երկու օրվա ընթացքում ապամոնտաժել ցանկապատը եւ մայթը վերադարձնել քաղաքացիներին: Պարզվում է՝ ցանկապատը դեռ իր տեղում է, իսկ պրն Սարգսյանը չի շտապում իր խոստումը կատարել: Սպասում ենք:

Սպասենք ու տեսնենք, թե գլխավոր ճարտարապետի խոսքը ե՞րբ գործ կդառնա:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ

# Իրանի դեմ ԵՄ-ի պատժամիջոցները հազիվ թե նպատակին ծառայեն

*Քանի որ սահմանողների խնդիրը իրանական նավթը չէ, այլ Սիրիա-Իրան առանցքը*

ՀԱԿՈԲ ՉԱՔՐՅԱՆ

Մերձավոր եւ Միջին Արեւելքը հակասություններով թերեւս աշխարհի ամենաբարդ տարածաշրջանն է: «Արաբական գարունը» էլ ավելի բարդացրեց իրավիճակը: Չնայած իշխանափոխությանը Թունիսում, Եգիպտոսում եւ Լիբիայում ոչ մի կերպ չի հաստատվում իշխանափոխությունից ակնկալվող խաղաղությունը, կայունությունն ու ժողովրդավարությունը: Արեւմուտքի օրհնությամբ շարունակվում են խռովությունները Սիրիայում:

Այլ կերպ, ռազմաքաղաքական իրավիճակը տարածաշրջանում անշեղ սրվում է, իսկ տարածաշրջանային երկրները հաջորդաբար ներքաշվում են Արեւմուտքի հետ Ռուսաստանի եւ Չինաստանի անհաշտ մրցապայքարում: Այդ երկրներից Արեւմուտքի նկատմամբ որդեգրած դիրքորոշմամբ, ինչպես նաեւ տարածաշրջանում ունեցած տեղով ու դերով առանձնանում են Սիրիան ու Իրանը:

Սիրիան միջազգային ուժերի մրցապայքարի կիզակետում էր հայտնվել դրսից կառավարվող խռովությունների դեռեւս առաջին իսկ օրից: Իսկ Իրանը իրանական նավթի ներմուծումն արգելելու Եվրոմիության որոշմամբ, որը ենթադրում է իրանական պետության դեմ կիրառվող պատժամիջոցների խստացումը: Մինչ պատժամիջոցների խստացման համար Միացյալ Նահանգները ողջունում էր ԵՄ-ին, իսկ Ռուսաստանն ու Չինաստանը խստիվ դատապարտում էին, ընդգծելով միաժամանակ դրա աննպատակահարմարությունը, Իրանն ինքը նախորդ օրվա պաշտոնական հայտարարությամբ դադարեցրեց նավթի արտահանումը եվրոպական երկրներ:

Խնդիրը, սակայն, ԵՄ-ի երկրներ նավթի արտահանման դադարեցումը չէ, այլ Հորմուզի նեղուցի փակման իրանական սպառնալիքներն են ու դրա հնարավոր ազդեցությունը նավթի միջազգային գների, նավթ ներմուծող եւ արտահանող երկրների վրա, հատկապես Պարսից ծոցի, որովհետեւ այս նեղուցի փակման դեպքում ամբողջությամբ ծոցն է ինքնաբերաբար փակվում:

Տես էջ 8

ԱԶԳ

## Ընթացիկ

# «Չէ՞ որ սա այն նույն Հայրիկյանն է»

Ազգային ինքնորոշում միավորումը առաջիկա խորհրդարանական ընտրություններին մասնակցելու է եւ դա անելու է իր «ողջ ներուժով»: Երեկ լրագրողների հետ հանդիպմանը ԱԻՄ նախագահ **Պարույր Հայրիկյանը** ներկայացրեց հունվարի 28-ին ԱԻՄ ներկայացուցչական խորհրդի ընդունած հայտարարությունը, որտեղ Ինքնորոշում միավորումը մասնավորապես համոզմունք է հայտնում, որ հայ ժողովրդի առջեւ ծառացած գերագույն խնդիրը Հայաստանի քաղաքացիներին երկրի տեր դարձնելն է, Հայաստանում կատարյալ ժողովրդավարության հաստատումը, հիշեցնում է, որ առաջիկա խորհրդարանական ընտրությունների առիթով ԱԻՄ-ը հանուն այդ ռազմավարական նպատակի ժողովրդավարական դաշինք կազմելու կոչ-հրավերով դիմել էր Հայաստանի քաղաքական ուժերին: «Իմ առաջարկած կատարյալ ժողովրդավարության մոդելը հավանության արժանացավ քրիստոնեա-դեմոկրատների, Դեմոկրատական կուսակցության, Յուրի Մանուկյանի ղեկավարած Կոմկուսի հավանությանը: Արտաշես Գեղամյանը իր հիացմունքը հայտնեց, ՕԵԿ-ը հետաքրքրությամբ լսեց, ԲՀԿ-ն նույնպես խիստ հավանության արժանացրեց, սակայն Գագիկ Ծառուկյանի հետ իմ վերջին հանդիպմանը տպավորություն ստացա, որ հավատարիմ է կոալիցիային: Նա մասնավորաբար նշեց, որ մոդելը շատ լավ է, բայց իրենք կոալիցիայի մաս են կազմում», ասաց Հայրիկյանը: Ի դեպ, կոալիցիայի խոշոր մաս ՀՀԿ-ին եւս Հայրիկյանը ներկայացրել է իր «կատարյալ ժողովրդավարության մոդելը», որը, ԱԻՄ առաջնորդի խոսքերով, հետաքրքրված է, «սակայն նախագահ Սարգսյանն ունի մտավախություն, քանի որ այս մոդելը որեւէ այլ երկրում կիրառված չէ»: Ընդգծելով, որ ինքը հենց «հայկական ժողովրդավարության մոդել» է առաջարկում, Հայրիկյանը հավելեց, որ ծրագիրը ներկայացվել է նաեւ ՀՅԴ-ին, «Ռամկավարները այս հարցի շուրջը լսումներ են անցկացրել», այդուհանդերձ, ԱԻՄ առաջնորդի, ու ԱԻՄ հայտարարության համաձայն՝ «Չնայած դրսեւորած հետաքրքրությանը եւ կատարյալ ժողովրդավարության համակարգի վերաբերեալ արտահայտած դրական կարծիքներին, այդ առաջարկը առ այսօր պատշաճ արձագանքի չի արժանացել»: Հետեւաբար,



Հայրիկյանը տեղեկացրեց, որ չնայած ԱԻՄ-ի՝ որեւէ այլ ուժի հետ դաշինք կազմելու հավանականությունը չի բացառվում, «դաշինքի թեման փակված չէ», այդուհանդերձ՝ ԱԻՄ-ը կհամագործակցի միայն այն քաղաքական կուսակցությունների եւ ուժերի հետ, որոնք կընդունեն «կատարյալ ժողովրդավարության մոդելը»: «Այս պարագայում հնարավոր է մեր համագործակցությունը ինչպես ՀՀԿ-ի, այնպես էլ, օրինակ, իմ կողմից շատ չսիրված ՀԱԿ-ի հետ», ասաց Հայրիկյանը:

Իսկ առայժմ 8000 անդամ ունեցող ԱԻՄ-ը, որի համար «հանրապետությունում գրասենյակ են համարվում բոլոր պիմականների տները, ռեստորանները կամ մշակութային օջախները», կա ռազմավարական խնդիր՝ Հայաստանի տեր դարձնել հայ մարդուն, գալիք ընտրություններին մասնակցելու է իր «ողջ ներուժով»: «Երբ շատերն իմացան, որ մասնակցելու ենք ընտրություններին, հանգիստ շունչ քաշեցին՝ ասելով. վերջապես իմացանք, թե ում ենք ձայն տալու», ասաց Հայրիկյանը: Իսկ «կատարյալ ժողովրդավարությանը», այն էլ՝ «հայկական ժողովրդավարության մոդելին» չհավատացողներին կամ դրան «ոչ պատշաճ» վերաբերվողներին ԱԻՄ առաջնորդը հետեւյալ կերպ է արձագանքում. «Չէ՞ որ սա այն նույն Հայրիկյանն է ասում, որին չէիք հավատում, երբ նա ասում էր՝ անկախություն...»:

ՀՈՎԻԿ ԱՓՅԱՆ

# «Բանակը պետք է մաքրել գողական, փողոցային բարքերից»

*1-ին էջից*

**Բանակում տիրող իրավիճակին է երեկ անդրադարձել նաեւ Արցախյան ազատամարտի հերոս, գեներալ-մայոր Արկադի Տեր-Թադեւոսյանը: Կոմանդոսի գնահատմամբ՝ թեպետ զինված ուժերում կան խոցելի կետեր, մասնավորապես կարգապահությունը պետք է ամրապնդվի, սակայն մարտունակությամբ հայկական բանակը մի քանի անգամ գերազանցում է հակառակորդի զինուժին: «Խրամատում թե զորամասում, պիտի հսկողություն լինի, զինվոր-զինվոր եւ զինվոր-սպա հարաբերությունները պետք է փոխվեն: Հիմա փորձում են կարգապահական կանոնագիրք ունենալ: Երեխա կորցրած մայրը չի կարող բանակի հաղթանակներն ու լավ կողմերը տեսնել»:**

**Արցախյան պատերազմի հերոսը շեշտել է, որ բանակում բարեփոխումներ պահանջողներից շատերի պայքարն ազնիվ չէ: Նա շեշտել է, որ ազնիվ եւ պարկեշտ անձանց կողքին գոյություն ունի նաեւ գրանտակերություն: «Նրանք միջազգային կազմակերպություններից փողեր են ստանում, իսկ դրանց վրա թուրքական ազդեցությունն ու վերահսկողությունն ավելի շատ են, քան հայկականը»: Նա հիշեց, որ երբ տարիներ առաջ պայքարում էր բանակում բարեփոխումների ուղղությամբ եւ պահանջում, որ բանակն առավել թափանցիկ դառնա, իր խոսքերը հիվանդագին էին ընկալվում: «Այժմ պատկերն այլ է, գնալով բանակն առավել թափանցիկ է դառնում», հավաստիացնում է Կոմանդոսը: Նա արդարացված չի համարում հայտարարությունը, թե բոլոր երկրների զինված ուժերում էլ ցավալի դեպքեր կատարվում են: «Մեզ համար յուրաքանչյուր զինվորի կյանքը մեծ արժեք ունի»:**

**Գեներալ-մայորի առաջարկությամբ՝ բանակում ողբերգական դեպքերի նվազեցման համար անհրաժեշտ է համապատասխան մթնոլորտ ստեղծել ոչ միայն զինված ուժերում, այլեւ հասարակությունում: «Հայկական բանակում պետք է այնպիսի կարգապահություն եւ ռազմահայրենասիրական մթնոլորտ տիրեն, որ ծնողներն իրենց որդիներին ծառայության ուրախությամբ ուղարկեն»: Ըստ նրա, այսօր Հայաստանում ռազմահայրենասիրական դաստիարակչական մթնոլորտն ավելի ցածր է, քան Խորհրդային Միությունում, ինչը լուրջ խնդիրներ է առաջացնում:**

## ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԸՆԴԱՌԱՋ

# Քվեները հաշվելիս ազատ կարող ենք նկարահանե՞լ

**Երեկ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի՝ լրագրողների հավատարմագրման կարգն ընդունող նիստից հետո ԿԸՀ անդամ Տաթեւ Օհանյանը լրագրողներին ասել է, թե նոր կարգով լրագրողները կարող են եւ լուսանկարել եւ տեսագրել ընտրողների քվեները հաշվելու գործընթացը: Ընտրական հանձնաժողովների նիստերին կարող է մասնակցել լրատվամիջոցից մեկ լրագրող (հեռուստաընկերություններից՝ նաեւ մեկ օպերատոր): Լրագրողներին հավատարմագիր է տրվելու մեկ տարի ժամկետով: Ճիշտն ասած՝ ԿԸՀ-ում հավատարմագրվելու իմաստն այդպես էլ չենք ըմբռնում, քանի որ ընտրական գործընթացի թափանցիկությունն ապահովելու համար բուն ընտրություններին բոլոր լրագրողները կարող են ներկա գտնվել հանձնաժողովներում, ու չի բացառվում, որ որեւէ վիճելի տարածքում նույն լրատվամիջոցներից երկու լրագրող ուզենան ներկա գտնվել քվեները հաշվելիս: Բոլոր դեպքերում՝ ԿԸՀ-ն եւս, մյուս պետական օղակների նման, անպայման ուզում էր հավատարմագրել լրագրողներին, եւ հավատարմագրում է: Տ. Օհանյանի ասելով՝ հավատարմագրման կարգը չի սահմանափակում չհավատարմագրված լրագրողի իրավունքը, յուրաքանչյուր լրագրող կարող է ազատորեն հետեւել ընտրությունների ընթացքին եւ լուսաբանել:** Մ. Խ.

# Այսօրվա նիստում

**Ազգային ժողովի պետաիրավական հանձնաժողովն այսօրվա նիստում պետք է քննարկի եւ եզրակացություն տա «Ժառանգության», ՀՅԴ-ի եւ նրանց միացած ԲՀԿ-ի առաջարկին՝ 100 տոկոս համամասնական կարգի անցնելու օրենսդրական նախաձեռնության վերաբերյալ խորհրդարանական լսումներ կազմակերպելու: Հավանաբար հանձնաժողովականները լսումներին դեմ չեն լինի, սակայն բուն նախաձեռնությանը, հայտնի է, որ ՀՀԿ-ն տեղին եւ ժամանակին չի համարում, իսկ պետաիրավական հանձնաժողովը ղեկավարում է ՀՀԿ-ական Դավիթ Հարությունյանը, ով նույնպես նպատակահարմար չի համարում այս պահին այդպիսի նախաձեռնությունը:** Մ. Խ.

# Ո՞վ է «Մեծ փիղը» եւ ով՝ «Մութ ուժերը»

Մեկ օր առաջ լրատվամիջոցները ստացել էին մի բարձրագոչ հայտարարություն, թե Հայաստանի երիտասարդական շարժումների, նախաձեռնությունների եւ անհատ քաղաքացիների առաջարկությամբ Հայաստանի «Վլադիմիր Պուտին» համազգային երիտասարդական շարժման վարչությունը որոշում է կայացրել հունվարի 31-ին Հայաստանում «Պուտին» ակումբ բացելու մասին: Երեկ այդ ակումբը բացվեց նախապես նշված Մոսկովյան անցուղի-5, Քլաբորատորիա հասցեում: Ակումբը պետք է նաեւ էլեկտրոնային երկլեզու կայք ունենա եւ Պուտինի մասին բուկլետ ու ամսագիր տպի: Նախաձեռնության հայտարարությունը ստորագրող անունների ընթերցումը միայն ամեն ինչ արժե՝ «Ռուսաց արծիվներ», «Մութ ուժեր», «Մեկ փիղ», «Կոտայքի հաշվապահների միություն», բայցեւ՝«Հայոց բլոգոսֆերա» դաշինք, «Հայկական մեդիա խումբ», Ռադիո Վան, emedia.am... Տեսնես պարոն Պուտինը գիտե՞, որ իրեն այստեղ աջակցում են մութ ուժերն ու մեծ փիղը (գազանանոցի՞): Նշենք սակայն, որ այս պուտինականների հայտարարությունը ստորագրողներից մեկից երեկ հերքում ենք ստացել, թե ինքը մասնակից է այս նախաձեռնությանը, ինչը կասկածներ է ծնում նաեւ այլ ստորագրողների հանդեպ. «Հայկական մեդիա խումբ» ՀԿ-ն երեկ «**Ազգին**» էր ուղարկել իր հայտարարությունը, որտեղ հերքում էր իր աջակցությունը «Պուտին» ակումբի հիմնադրմանը. «Կազմակերպության անվան շահարկումը «Պուտին» ակումբի շրջանակներում համարում ենք վարկաբեկում եւ չենք բացառում հարցի հետագա բարձրաձայնումը դատական ատյաններում», գրել է «Հայկական մեդիա խումբ» ՀԿ-ի փոխնախագահ Լեւոն Ջանփոլադյանը: Երեկ պարզվեց նաեւ, որ փետրվարի 2-ին Ռուսական գրքի տանը «Պուտին» ակումբ հիմնադրելու գաղափար ունեցող մցակից պուտինականները եւս բարկացայս մի հայտարարություն էին տարածել Քլաբորատորիայի պուտինականների հասցեին, նշելով, թե նախանձն ու անարդար մրցակցությունը անհասկանալի մարդկանց եւ կազմակերպությունների մի խմբակի մղել են ԱՊՀ երկրների երիտասարդական խորհրդից փոխառել ակումբի ստեղծման գաղափարը: Վա՜յ, կրա՞կն ենք ընկել ձեր ձեռքը, այ պուտինապաշտներ, իրար հետ մրցում եք, թե Հայաստան աշխարհում ո՞վ է ձեզանից ավելի պուտինասեր:

Մ. Խ.

# Ցուցակ կազմելու վերաբերյալ ՀՀԿ-ական եւ ՀԺԿ-ական մոտեցումներ

**Ակումբային քաղաքական գործունեությունն իր բարձրակետում է՝ երեկվա ակումբայիններից մեկ զույգ՝ ՀՀԿ-ական Մկրտիչ Մինասյանն ու ՀԺԿ-ական Գրիգոր Հարությունյանը լրագրողների խնդրանքով խոսելով իրենց ներկայացրած ուժերի համամասնական ցուցակների կազմության մասին, որոշ ճշգրտումներ արեցին: Մինասյանը նշեց, որ ՀՀԿ համամասնական ցուցակում (ինչպես ի դեպ նաեւ մեծամասնական ընտրակարգով առաջադրվածների դեպքում) ավելի շատ քաղաքական գործիչների վրա է շեշտը դրվելու, սակայն ՀՀԿ-ն դեռ չի կազմել իր ցուցակները. «Կլինեն նոր դեմքեր, նոր մոտեցումներ, հաշվի կառնվեն անպայման մարդու քաղաքական կշիռն ու վարքագիծը», ասաց նա: Արտաշես Գեղամյանի, Խոսրով Հարությունյանի, Հայկ Բաբուխանյանի՝ ՀՀԿ ցուցակում ընդգրկվելու լուրերին ի պատասխան՝ Մինասյանը կրկին նշեց, որ այդ կարգի քննարկումներ ՀՀԿ գործադիր նիստում կամ խորհրդում չեն եղել, իսկ այդ մարդիկ հայտնի են իրենց քաղաքական գործունեությամբ, ու, ամենայն հավանականությամբ, ՀՀԿ-ն կքննարկի ու կորոշի նաեւ այդ կարգի խնդիր, բայց առայժմ որոշում չկա: Իսկ ընդհանրապես՝ ամեն ինչ արվելու է նախ արդար ու ոչ վիճահարույց ընտրություններ անցկացնելու համար:**

**ՀԺԿ քարտուղար Գրիգոր Հարությունյանից «Ազգը» փորձեց ՀԱԿ ցուցակները կազմելու շուրջն այժմ առկա երկու մոտեցումների վերաբերյալ տեսակետ ստանալ. մեկ տեսակետով՝ 18 կուսակցություններից յուրաքանչյուրի լիդերն է ընդգրկվելու համամասնական ցուցակի առաջին քսանյակում, մյուս մոտեցմամբ՝ ՀԱԿ անդամ կուսակցությունների՝ առավել հայտնի գործիչները, ովքեր 5-6 կուսակցություն են ներկայացնում: Գրիգոր Հարությունյանը չուներ այս հարցի պատասխանը, ժխտեց, թե ցուցակների կազմության քննարկումներից ՀԺԿ-ն դժգոհություն ունի՝ ցուցակների հարց չի էլ քննարկվել, բայց եւ անուղղակի հաստատեց երկրորդ մոտեցման մասին մեր ասածը՝ նշելով, որ անձամբ ինքը ցուցակներում հասարակությանը հայտնի գործիչների ընդգրկելու կողմնակիցն է, ում ժողովուրդը ճանաչում է: Մամուլը գրել էր, թե ՀԱԿ ցուցակի առաջին երկու հորիզոնականը գրավողները հայտնի են՝ Լեւոն Տեր-Պետրոսյան, Ստեփան Դեմիրճյան, ո՞վ կլինի երրորդ տեղում: Անձամբ Գ. Հարությունյանը, եթե ընտրությունը լիներ Լեւոն Զուրաբյանի եւ «Հանրապետություն» կուսակցության առաջնորդ Արամ Սարգսյանի միջեւ (հարցն այդպիսին էր), կընտրի Արամ Սարգսյանին: Հարությունյանը փորձում էր ընտրություններ կեղծելու մասին խոսակցությունը տանել ընտրողների՝ իր կարծիքով կեղծ թվի վրա, նշելով, թե Հայաստանից բացակա 500-600 հազար մարդու անունն օգտագործելով՝ իշխանությունը կեղծելու է: Բայց եւ հույս ուներ, որ ի վերջո իշխանության մեջ կլինեն շրջահայաց մարդիկ, որոնք թույլ չեն տա պատերազմող երկիրը ցնցումների տանել:**

Մ. Խ.

***Հ. Գ.-500-600 բացակա ընտրողի վերաբերյալ անընդհատ բանավեճերի վերջը տալու մի լավ առաջարկ ունենք՝ քաղաքական ուժերից մեկ-երկուսը թող դիմեն դատարան՝ վիճարկելու համար ընտրողների վերաբերյալ պաշտոնական թիվը եւ ակնառու ապացույցներով շահելու դատը. խոստանում ենք տեղեկատվական աջակցություն:***

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան Ի տարի

Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
Ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
**www.azg.am**

Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԷՏԻՔԵԱՆ / հեռ 521635

Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221

Հաշուապահութիւն (գովազդ) / հեռ 582960

Լրագրողների սենեակ / հեռ 581841

Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483

*Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն* / հեռ 529353

Համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատւութիւն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

# Սոցպատնախարարն ու նրա գերակայությունները

## *Էլեկտրոնային կենսաթոշակներ, միասնական սոցծառայություններ*




2012-ի գերակայությունները ներկայացնելու հերթը երեկ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարար **Արթուր Գրիգորյանինն** էր: Նա նշեց իր ղեկավարած նախարարության երեք այդպիսի գերակայություններ՝ բազմաստիճան կենսաթոշակային համակարգի, ինտեգրացված սոցիալական ծառայությունների համակարգի ենթակառուցվածքների ներդրում եւ երեխաների իրավունքների պաշտպանության ծրագիր:

Կենսաթոշակային բազմաստիճան համակարգի մասին նախարարը տեղեկացրեց, որ այս տարվա հուլիսից գործելու է էլեկտրոնային կենսաթոշակների համակարգը, որը ենթադրում է կենսաթոշակառուների մասին միասնական տեղեկատվական բազա: Այդ դեպքում արդեն կբացառվի մահացած կենսաթոշակառուի, Հայաստանից դուրս գտնվող կենսաթոշակառուի համար թոշակ ստանալը: Ըստ Արթուր Գրիգորյանի, ներկայումս Հայաստանում կա 509 հազար կենսաթոշակառու: Այդ ցուցանիշը ճշտվել է 2011-ին կատարված ցուցակների մաքրման արդյունքում, որից առաջ նշված կենսաթոշակառուների թիվը 520 հազար էր: 2011-ի պետական բյուջեում նախատեսված կենսաթոշակների գումարներից, ցուցակների ճշտմամբ, ավելի քան 10 մլրդ դրամ վերադարձվել է պետական բյուջե:

Հարցին, թե ովքե՞ր են պատժվել կենսաթոշակների գործով պետությանը հասցրած վնասի համար, աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարը պատասխանեց, որ այդ հարցով զբաղվում են իրավապահ մարմինները, եւ երբ նրանք հրապարակեն արդյունքները, բոլորս կտեղեկանանք այդ մասին:

Ինտեգրացված սոցիալական ծառայությունները ենթադրում են բոլոր սոցիալական ծառայությունների կենտրոնացումը մեկ միասնական համակարգում, ինչի շնորհիվ քաղաքացիները պետք է ձերբազատվեն տեղեկանքների եւ այլ խնդիրների հետ կապված ավելորդ քաշքշուկներից: Նախատեսվում է մինչեւ տարեվերջ ստեղծել 15 կենտրոններ Երեւանում եւ Հայաստանի մյուս բնակավայրերում, որտեղ կաշխատեն եւ մարդկանց խնդիրներով կզբաղվեն սոցիալական աշխատողները:

Երեխաների իրավունքների ծրագրով նախատեսվում է քայլեր ձեռնարկել մանկատներում եւ գիշերօթիկներում ապրող երեխաներին ընտանիք վերադարձնելու ուղղությամբ, ինչն, ըստ նախարարի, հաջող օրինակ ունի: Նա վկայակոչեց «Զատիկ» մանկատան դեպքը, որը վերակազմվել է եւ դարձել երեխաների ցերեկային աջակցության կենտրոն: «Այսինքն, երեխաների մուտքը մանկատուն դժվարացնելու ենք, ելքը դեպի ընտանիքներ՝ հեշտացնելու», ասաց Արթուր Գրիգորյանը:

Աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարը մեկ այլ կարեւոր խնդիր համարեց հաշմանդամության խմբերի տրամադրման կարգի փոփոխումը, որը պետք է կատարվի 2013-ին: Նոր կարգով աշխատունակության որոշակի կորուստ ունեցող անձին, որը, սակայն, մասնակիորեն աշխատունակ է, պետությունը աջակցություն եւ աշխատանք կառաջարկի:

Քաղաքացուն «բոմժ» անվանելու վերաբերյալ հարցին պատասխանելով՝ Արթուր Գրիգորյանն ասաց, որ այդ մասին տեղեկատվություն հաղորդած լրագրողը չի ներկայացրել ամբողջ զրույցը, որտեղ այդ քաղաքացին, դիմելով նախարարին, ասել էր. «Ես բոմժ եմ, ինչի՞ եք ինձ ծերանոց տանում, ոչ թե բոմժերի կացարան»: Դրան էլ, ըստ Արթուր Գրիգորյանի, ինքը պատասխանել է, «եթե դու բոմժ ես ...» եւ շարունակել:

**ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

# Ստեփանակերտի նոր քաղաքապետը նախընտրում է թափանցիկ գործելաոճը

**Ստեփանակերտի քաղաքապետ Սուրեն Գրիգորյանը համամիտ չէ այն տարեթվին, որով պաշտոնապես նշվում է ԼՂՀ մայրաքաղաքի տարիքը: Նրա խոսքով, 1923 թվականին քաղաքն ընդամենը վերանվանվել է Ստեփան Շահումյանի անունով, իսկ մինչ այդ, սկսած Վաչագան Բարեպաշտ թագավորի ժամանակներից, բնակավայրը կոչվում էր Վարարակն: Այս տեսակետը նա հայտնել է իր պաշտոնավարման հարյուր օրվա կապակցությամբ հրավիրված ասուլիսի ժամանակ: Ծրագրված է առաջիկայում ստեղծել քաղաքի պատմության թանգարան, եւ այդ շրջանակում քաղաքապետն ակնկալում է պատմաբանների գիտականորեն հիմնավորված եզրակացությունը՝ Ստեփանակերտի տարիքը ճիշտ նշելու համար:**

**Միեւնույն ժամանակ, Սուրեն Գրիգորյանը վերապահում ունի Ստեփանակերտ ժամանողների այն կարծիքին, թե քաղաքը շատ մաքուր է: Մայրաքաղաքում շուրջօրյա ջրամատակարարման նպատակով նոր ջրագծեր են անցկացվել, սակայն խողովակների տեղադրումից հետո քանդված հատվածները չեն ասֆալտապատվել, մի շարք փողոցներ դարձել են ցեխոտ ու դժվարանցանելի: Այս տարվա բյուջեով համապատասխան գումարներ են նախատեսվել փողոցներն ու շենքերի բակերը հնարավորինս կարգի բերելու համար, նշեց քաղաքապետը:**



**Բնակչությունից արդարացի բողոքներ են հնչում նաեւ ջրամատակարարման հետ կապված: Ս. Գրիգորյանը դա բացատրեց այն հանգամանքով, որ ջրագծեր անցկացնող ընկերությունը պատրաստի հատվածները դեռ չի հանձնել «Ջրմուղ-կոյուղի» ընկերության տնօրինմանը: Շուրջօրյա ջրամատակարարման նախագծային արժեքը կազմում է 9 միլիարդ դրամ, որի շուրջ 65 տոկոսը, թեպետ ոչ պատշաճ որակով, արդեն իսկ կատարված է: Այդ առնչությամբ նա լրագրողներին տեղեկացրեց, որ խնդիրը շահագրգիռ կառույցների մասնակցությամբ քննարկվել է ԼՂՀ նախագահի մոտ: Կառավարության ղեկավարը քաղաքաշինության նախարարին հանձնարարել է մանրամասն ուսումնասիրել վիճակը, իսկ թերացումների մասին հավաքված նյութերն ըստ քաղաքապետի՝ կհանձնվեն դատախազություն:**

**Սուրեն Գրիգորյանը անդրադարձավ նաեւ բազմահարկ շենքերի տանիքների անմխիթար վիճակին, նշելով, որ դրանք եւս քաղաքապետարանի ուշադրության կենտրոնում են: Հաշվառված են այն բոլոր շենքերը, որոնց տանիքներն առաջնահերթ վերանորոգման կարիք ունեն, եւ ընթացիկ տարում դրանք կթիթեղապատվեն, հավաստիացրեց քաղաքապետը:**

**Իր նախընտրական ծրագրում Ս. Գրիգորյանը խոստացել էր քաղաքացիներից ստացված բոլոր բողոքներին լիարժեք ընթացք տալ: Այդ նպատակով քաղաքապետարանում ստեղծվել է նոր բաժին, որն զբաղվում է քաղաքացիների դիմում-բողոքների ուսումնասիրությամբ:**

**Իսկ ընդհանրապես, նոր քաղաքապետի գործելաոճը թափանցիկությունն ու հրապարակայնությունն է: Ս. Գրիգորյանի անմիջական նախաձեռնությամբ ստեղծվել է քաղաքապետարանի պաշտոնական կայքէջ (www.stepanakert.am), որի շնորհանդեսը տեղի ունեցավ մամուլի ասուլիսի վերջում: Քաղաքապետի նորանշանակ մամուլի քարտուղար Դավիթ Միքայելյանը, ներկայացնելով կայքէջը, համոզմունք հայտնեց, որ լրատվամիջոցների ներկայացուցիչների հետ հետագա համագործակցությունը կլինի արդյունավետ:**

**ԿԻՄ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ**
Ստեփանակերտ

***ՀԱՆԳՈՒՑԱԼՈՒԾՈ՞ՒՄ***

# Գյումրու քաղաքապետը պատրաստ է գնել Թումանյանի թիֆլիսյան բնակարանն ու նվիրել տեղի հայ համայնքին

**Գյումրու քաղաքապետ Վարդան Ղուկասյանն ու նրա եղբայրները «իրենց խնայողություններով» պատրաստ են գնել Հովհաննես Թումանյանի թիֆլիսյան բնակարանի այն հատվածը, որ պատկանում է վրացի գործարար Արչիլ Լեժավային՝ հետագայում այն նվիրելու Թբիլիսիի հայ համայնքին: Այս մասին երեկ «Հայացք» ակումբում տեղի ունեցած ասուլիսում տեղեկացրեց Հայաստանի գրողների միության նախագահի Լեւոն Անանյանը՝ ներկայացնելով նաեւ Ղուկասյանների ստորագրած պարտավորագիրը:**

**Դեռեւս 10 օր առաջ՝ Հայաստանի վարչապետի մոտ քննարկումից հետո Թբիլիսի մեկնած պատվիրակության կազմում Անանյանը զանգեր է ստացել Գյումրու քաղաքապետից՝ Թումանյանի բնակարանի հարցով, իսկ արդեն գործով Գյումրի մեկնած ժամանակ հանդիպել ու հավաստում է ստացել Վարդան Ղուկասյանից, որ Ղուկասյանները հաստատապես կգնեն վրացի գործարարին պատկանող 120 քմ տարածքը: Թե ինչ գնով ձեռք կբերվի Թումանյանի բնակարանի հիշյալ չորս սենյակը՝ դեռեւս հստակ չէ, այդ իսկ պատճառով էլ Թբիլիսի հայերի միությունը կբանակցի Լեժավայի հետ:**

**Ինչ վերաբերում է բնակարանի մնացյալ հատվածին՝ 98 քմ-ին, որի սեփականատերը Թումանյանի ծոռնուհի Այրոնա Կոլեսնիկովան է, ապա ասուլիսին մասնակից, Թումանյանի թոռնուհի Իրմա Սաֆրազբեկյանը տեղեկացրեց, որ Կոլեսնիկովան առայժմ չի ուզում վաճառել իրեն պատկանող հատվածը:**

**Թումանյանի թիֆլիսյան բնակարանի հարցը միայն բնակարանի մի հատվածի ձեռքբերմամբ չէ, որ ավարտվում է. բնակարանը անմխիթար վիճակում է ճիշտ այնպես, ինչպես Թբիլիսիի կենտրոնական Սոլոլակի թաղամասի տներն ընդհանրապես: Ասել է թե անհրաժեշտություն կա նորոգելու բնակարանը, ապա որեւէ նպատակի ծառայեցնելու համար առաջ կգան այդ բնակարանի պահպանության, նաեւ որպես մշակութային կենտրոն շահագործելու ծախսեր: Բնակարանի նորոգման հնարավոր իրագործող կարող է դառնալ Թբիլիսիի քաղաքապետարանը, իսկ «Լոռվա ձոր» հայրենակցական միությունն էլ, ի դեմս Սերգո Երիցյանի, պատրաստակամ է հոգալու բնակարանը, ասենք որպես գրադարան օգտագործելու ծախսերը:**

**Այդուհանդերձ, Լեւոն Անանյանը տեղեկացրեց, որ ներկա տեղեկությունները վերջնական չեն: Այդպիսիք լինելու դեպքում հանրությունը կտեղեկացվի:**

**Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

# Քննարկվել են ՀՀ-ԵՄ գործողությունների ծրագրի 2012-2013թթ. միջոցառումները

Երեկ տեղի է ունեցել Եվրոպական հարեւանության քաղաքականության ՀՀ-ԵՄ գործողությունների ծրագրի կատարումն ապահովող 2012-2013 թթ. միջոցառումների ցանկի նախագծի քննարկումը, որին ներկա էին եվրոպական կառույցների հետ ՀՀ պետական մարմինների համագործակցությունը համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի անդամները, ՀՀ-ում ԵՄԽԽ խորհրդատուները, ԵՄ երկրների դեսպանները եւ միջազգային կառույցների ղեկավարությունը:

Բացման խոսքում ԱԱԽ քարտուղար **Արթուր Բաղդասարյանն** ասել է. «2012-2013 թթ. ծրագրի մշակումն իրականացվել է ՀՀ բոլոր պետական մարմինների ակտիվ ներգրավմամբ: Այն ներառում է շուրջ 160 գործողություն՝ 6 գերակա ուղղություններով: Գործողությունների ծրագրի իրականացմամբ լավ հնարավորություններ կստեղծվեն Հայաստանում ԵՄ-ի հետ բարեհաջող ընթացող մեր գործընկերությունը որակական նոր շրջափուլի հասցնելու համար»:

Գործողությունների ծրագիրը համապարփակ փաստաթուղթ է, որը ներառում է քաղաքական բնույթի գործողությունների, արդարադատության, ազատության եւ անվտանգության ոլորտին վերաբերող գործողությունների, ենթակառուցվածքային բնույթի գործողությունների, հումանիտար բնույթի գործողությունների, շրջակա միջավայրի, առողջապահության եւ սոցիալական բնույթի գործողությունների եւ ֆինանսատնտեսական եւ առեւտրային բնույթի գործողությունների խմբեր: «Այս փաստաթուղթը միջանկյալ մի փաստաթուղթ է, մինչեւ ասոցացման համաձայնագրի ստորագրումը, եւ մենք կարծում ենք, որ 2012-2013 թթ.-ին այս միջոցառումների իրականացումը էապես կնպաստի Հայաստանում նշված ուղղություններով բարեփոխումներն առաջ մղելուն», նշել է Արթուր Բաղդասարյանը:

Հայաստանում ԵՄ պատվիրակության ղեկավար Տրայան Հրիստեան շեշտել է, որ առաջիկա տարիներին Հայաստանի Հանրապետությունը եւ ԵՄ-ն իրենց համատեղ ջանքերը կենտրոնացնելու են նախագծի միջոցառումների արդյունավետ կենսագործման ուղղությամբ եւ ընդգծել է գործողությունների ծրագրի կարեւորությունը թե՛ Հայաստանի, թե՛ ԵՄ-ի համար:

ՀՀ ԱԺ փոխխոսնակ **Էդուարդ Շարմազանովն** իր ողջույնի խոսքում վստահություն է հայտնել, որ 2012-2013 թթ. ԵՀՔ ՀՀ-ԵՄ գործողությունների ծրագրի իրականացման արդյունքում Հայաստանի Հանրապետությունը էլ ավելի կմոտենա ժողովրդավարական զարգացած հասարակություններին:

Նախագծի շուրջը՝ իրենց գերատեսչությանը վերաբերող զեկույցներով հանդես են եկել ՀՀ ոստիկանության պետի տեղակալ Ա. Օսիկյանը, էկոնոմիկայի նախարարի տեղակալ Գ. Մելքոնյանը, արտաքին գործերի նախարարի տեղակալ Զ. Մնացականյանը: ՀՀ-ում ԵՄԽԽ ղեկավար **Անթի Հարթիկայնենն** ներկայացրել է նախագծի վերաբերյալ խմբի փորձագիտական գնահատականը եւ նկատառումները:

Ամփոփելով քննարկման արդյունքները՝ ԱԱԽ քարտուղար Արթուր Բաղդասարյանը նշել է, որ ՀՀ-ԵՄ համագործակցության նոր ծրագիրն առաջիկայում կքննարկվի Ազգային անվտանգության խորհրդում եւ կներկայացվի ՀՀ նախագահի վավերացմանը:

**Ա. Հ.**

# Հայոց ցեղասպանություն. մեղանչում ընդդեմ աստվածների՞

**Ժան Վարուժան Սիրապյան**

***Ժ. Վ. Սիրապյանը ծնվել է Թուրքիայում: Ֆրանսիան բացահայտել է Ստամբուլի Մխիթարյան հայրերի մոտ սովորելիս: Ամերիկյան համալսարանում ուսանել է հումանիտար գիտություններ: Փարիզ մեկնելուց հետո դրսեւորել է զանազան ունակություններ. աշխատել է որպես Simca-ի թարգման, թաղամասի լուսանկարիչ, տեղեկագետ, հաշվապահ, Eicar-ի ուսուցիչ, Ալֆորվիլի մունիցիպալ խորհրդական, լրագրող եւ չորս տասնյակ աշխատությունների հրատարակիչ: Հայաստանը նրա իսկական կիրքն է: Նա Զոպանյան ինստիտուտի հիմնադիր նախագահն է, Europe et Orient հանդեսի տնօրենը: Հայաստան կատարած ճամփորդությունները նրան առիթ տվեցին ֆրանս-հայկական կապեր ստեղծել Ֆրանկոֆոնիայի շրջանակներում եւ անհրաժեշտ վավերագրեր ժողովել իր ապագա հրատարակումների համար: Երեւանում նա հանդես է գալիս Պետհամալսարանի լրագրության ֆակուլտետում, մասնակցում ռադիոյի ու հեռուստատեսության հաղորդումներին:***

***Համագրույցների ժամանակ նա պաշտպանել է մարդու իրավունքները, Թուրքիայում փոքրամասնությունների վիճակի եւ Եվրամիությանը Թուրքիայի անդամակցության հարցերի շուրջը, իսկ France 24 հեռուստաալիքով խոսել է որպես Փոքր Ասիայի եւ Հարավային Կովկասի ռազմավարական հետազոտությունների ու վերլուծությունների կենտրոնի՝ Զոպանյան ինստիտուտի հիմնադիր նախագահ: Անդամ է Ռամկավար ազատական կուսակցության, Ֆրանսիայում կուսակցական եւ ազգային տարբեր կառույցներում վարել է կարեւոր պաշտոններ:***

***Ժ. Վ. Սիրապյանն այսօր Փոքր Ասիայի եւ Հարավային Կովկասի հարցերի անուրանալի մասնագետներից մեկն է:***

Huffington-France կայքէջում «Հայոց ցեղասպանություն. վտանգավոր խղճահարություն» վերնագրով հրապարակած հոդվածում արդարադատության նախկին նախարար Ռոբեր Բադենտեն վերադառնում է Սենատում հունվարի 23-ին յոթնուկեսժամյա բանավեճերից հետո ընդունված օրենքի մոլի ընդդիմախոսների քանիցս կրկնած փաստարկներին:

Նույն փաստարկները ենթադրում են նույն պատասխանները, որ մենք այստեղ կփորձենք տալ պրն Բադենտեի հիշատակած երեք կետերին:

## 1-ին

Իր հոդվածի առաջին մասում Բադենտեն գրում է. «Կարծում եմ՝ քերապեւտիկ դերից բացի, այդ օրենքը կբերի միայն տհաճություններ, այդ թվում՝ հենց հայ համայնքին»: Նա առաջարկում է մի սցենար, երբ Ֆրանսիայում հարցման ենթարկվող որեւէ թուրք պատմաբան կամ հրապարակախոս կմխտեր Հայոց ցեղասպանության փաստը եւ դատական հետապնդման կենթարկվեր: «Հետապնդվող անձը չի վարանի խոսել օրենքի հակասահմանադրականության մասին, որը QPC-ի՝ սահմանադրականության գերակա հարցի պատճառով դեմ է համոզմունքի ու խոսքի ազատությանը»: Արդ, հանրային իրավունքի դոկտոր Վենսան Կուսիրա-Կուստերը այդ փաստարկին արդեն պատասխանել է Le Monde թերթի հունվարի 17-ի հոդվածում.

«Սակայն QPC-ն ստեղծված չէ օրենքի կողմից ամբողջ սահմանադրության կատարման համար: Սահմանադրականության գերակա հարցը (QPC) սահմանափակվում է հիմնարար իրավունքների եւ ազատությունների պաշտպանությամբ, ուստի չի կարող իրավունքների եւ ազատությունների պաշտպանությանը չառնչվող հնարավոր հակասահմանադրականությունների պատճառով հանգեցնել 2001-ի օրենքի դատապարտմանը: Սահմանադրությունը ընդդատյա անձին որեւէ իրավունք չի շնորհում, երբ խորհրդարանը հարգում է իր օրենսդրական իրավասությունը կամ գործադիր իշխանության լիազորությունները: Բացի դրանից, 2001-ի օրենքը լոկ հռչակագրային է: Այսպիսով, որեւէ պատճառ չկա Ռոբեր Բադենտեի նման կարծելու, թե «քննարկումը կվերաբերի առաջին հերթին դրա սահմանադրականությանը»:

Ի դեպ, տվյալ օրենքի քննադատները երբեք չեն կարողացել պատասխանել հետեւյալ հարցին. «Ֆրանսիայում ճանաչված է երկու ցեղասպանություն՝ Հոլոքոստը եւ Հայոց ցեղասպանությունը: Առաջինի ժխտումը քրեապես պատժելի է: Նորմա՞լ է, որ մյուսը պաշտպանված չլինի»:

## 2-րդ

Իր հոդվածի երկրորդ մասում պրն Բադենտեն գրում է. «Թող խորհրդարանն իրավասու չլինի պատմության շարադրման հարցում. այդ թեմայով ամեն ինչ հիանալի ասել են Պիեռ Նորան եւ «Պատմության ազատություն» ընկերակցության անդամները: Միայն ամբողջատիրական վարչակարգերն են ընդունում իշխանության ամրագրած եւ դատավորի պարտադրած «պաշտոնական» պատմություն»:

Երկու պատասխան կա այդ երկու ստահոդ պնդումներին, որոնք բանավեճերի ընթացքում բազմիցս հնչել են ինչպես Ազգային ժողովում, այնպես էլ Սենատում: Նախ, դեկտեմբերի 18-ի եւ հունվարի 23-ի քվեարկություններով «պատմություն չի շարադրվում», եւ Պիեռ Նորայի հավաստումը ճիշտ չէ: Այդ քվեարկությունը «օրենք է թելադրում» եւ Ֆրանսիայի հայ քաղաքացիներին (եւ ոչ միայն նրանց) պաշտպանում է թուրք երիտասարդների գերազգայնական խմբերի զանազան բռնարարքներից, որոնց գործողությունները ղեկավարվում են Անկարայից:

Այժմ անդրադառնանք «պաշտոնական» պատմության փաստարկին: Այս կապակցությամբ պետք է ասել, որ պաշտոնական պատմությունը Թուրքիայում գործի դրեց Մուստաֆա Քեմալը 1930-1931 թթ., իսկ դրա անշեղ կիրառմանը հետեւող կառույցը կոչվում է TTK (Türk Tarih Kurumu): Մեկնաբանության ոչ մի հնարավորություն չտվող Ղուրանի նման Թուրքիայի պաշտոնական պատմությունը չի հանդուրժում որեւէ շեղում Աթաթուրքի դոգմաներից, հատկապես՝ Հայոց ցեղասպանության հարցում, «որը երբեք չի եղել»: Ի դեպ, Թուրքիայի առաջարկած «պատմաբանների հանձնախմբի» խայծով հրապուրվողներին, ներառյալ Ֆրանսիայի արտգործնախարարին, հարկավոր է հիշեցնել 2011-ի դեկտեմբերի 15-ին վարչապետ Էրդողանի ասած խոսքերը. «Ոչ մի պատմաբան չի կարող որեւէ ցեղասպանության հետք գտնել մեր պատմության մեջ»: Քննարկումն ավարտված է:

## 3-րդ

Եվ վերջապես, հոդվածի երրորդ՝ վերջին մասում պրն Բադենտեն մոլորության մեջ է ընկնում, երբ գրում է. «Ֆրանսիայի խորհրդարանի այդ անչափավորությունն անպայման կառաջացնի հակաֆրանսիական արձագանքներ»: Ըստ որում, «անչափավորություն» ասելիս նա օգտագործում է հին հունարեն hubris բառը, որն ունի նաեւ գոռոզությունից դրդված մեծ սխալ գործելու՝ աստվածների դեմ մեղանչելու իմաստ: Պարզվում է, այդ օրենքն ընդունելով՝ Ֆրանսիայի խորհրդարանը մեղանչել է աստվածների դեմ: Փողի՞ աստվածների: Գուցե պրն Բադենտեն Թուրքիային դնում է աստվածավայելու պատվանդանի վրա՞:

«Մենք Թուրքիայի իշխանություններին կարող ենք հորդորել վերանայելու իրենց պատմությունը, ինչպես որ Եվրոպայում արել են ուրիշ պետություններ», գրում է նա: Այո, բայց տեղահանվածները (հայեր, քրդեր, ալեւիներ, ասորիներ...) արտերկրում եւ ժողովրդավարներն ու առաջադիմականները երկրի ներսում հենց դա են փորձում անել տասնամյակներ շարունակ: Ըստ որում՝ ոչ թե մեր փղոսկրե աշտարակներում եւ Փարիզի շքեղ թաղամասերի գրասենյակներում, այլ հենց տեղում: Պատմությունը վերանայելու հորդորը կարող էր գործել որեւէ նորմալ երկրում: Բայց չի կարող նորմալ համարվել այն երկիրը, որտեղից փախավ նույնիսկ գրականության Նոբելյան մրցանակի դափնեկիրը, քանզի համարձակվել էր խոսել հայերի եւ քրդերի կոտորածների մասին, որտեղ երկու ժողովուրդների հաշտեցման փորձ արած լրագրող եւ հումանիստ Հրանտ Դինքին օրը ցերեկով «խորքային պետության» հրահանգով սպանեց 17-ամյա մի ազգայնական, որտեղ հինգ տարվա դատավարությունից հետո սպանության կազմակերպիչներին ազատ արձակեցին:

Եվ խնդրում եմ, մի՛ բերեք այդ խղճուկ փաստարկը, թե Թուրքիայի խորհրդարանը կարող է ընդունել օրենք, որպեսզի ճնշի Ֆրանսիային եւ նրա պատմությունը: Այդ փաստարկի լավագույն պատասխանը տվեց մի ալժիրցի, վարչապետ Էրդողանին հիշեցնելով անջնջելի հետքեր թողած երեքդարյա (1530-1830) օսմանյան վայրագ տիրապետությունը:

Անհատների ժխտողական դրույթների դեմ կարելի է պայքարել հակափաստարկներով, բայց պետական ժխտողականությունից կա միայն մեկ պաշտպանություն՝ օրենքը:

ՎԱՐՈՒԺԱՆ ՍԻՐԱՊՅԱՆ
Փարիզ, Europe et Orient հանդեսի տնօրեն
Թարգմ. Պ. Ք.

ՀՐԱԺԵՇՏ

# Դոկտ. Անդրեաս Ծուլիկյան



***Հունվարի 15-ին տրտմությամբ տեղեկացանք լոնդոնահայ ազգային-հասարակական գործիչ դոկտ. Անդրեաս Ծուլիկյանի վախճանման մասին: Շաբաթավերջին ստացանք պաշտոնական մահախոսականը, որը հրապարակում ենք ստորեւ***

**Դոկտ. Ծուլիկյանը լոնդոնահայ համայնքի ազգային-հասարակական գործիչներից մեկն էր:**

**Լինելով բժիշկ-վիրաբույժ, նա եղել է Արքայական վիրաբուժական քոլեջի (FRCS) եւ Անգլիահայ բժիշկների միության անդամ: Իր մասնագիտական ակտիվ գործունեությանը զուգահեռ, դոկտ. Ծուլիկյանը երկարամյա բեղմնավոր եւ ազգանվեր աշխատանք է ծավալել ՌԱԿ Միհրան Տամատյան ակումբում (1980-1998), Լոնդոնահայ համայնքային եկեղեցական խորհրդում, ՀԲԸՄ-ում, Թեքեյան մշակութային միության վարչական մարմնում (1970-1987), Լոնդոնի Թեքեյան հիմնադրամի (1996-2008), ինչպես նաեւ «Թեքեյան կենտրոն» հիմնադրամի (Հայաստան) հոգաբարձուների խորհրդում (1996-2008):**

**1980-1997 թթ. հանդիսացել է Լոնդոնի Թեքեյան հիմնադրամի կողմից երկար տարիներ հրատարակվող «Էրեբունի» երկշաբաթաթերթի պատասխանատու խմբագիրը. հանդես է եկել մի շարք հոդվածներով եւ հրապարակումներով՝ մշտապես վեր հանելով հայությանը հուզող խնդիրներ, հետապնդելով Հայ դատի եւ հայ ժողովրդի շահերը:**

**Հակառակ իր տեւական վատառողջ վիճակին եւ հանգստի կոչված լինելուն, դոկտ. Ծուլիկյանը վերջին տարիներին շարունակում էր աշխատել, նամակակցել սփյուռքի տարբեր շրջանակների եւ լրատվամիջոցների հետ, գրել հոդվածներ: Լինելով ճշմարիտ հայրենասեր, մտավորական եւ չափազանց սկզբունքային մարդ, մինչեւ իր կյանքի վերջին օրերը նա հավատարիմ մնաց իր գաղափարներին, Մայր հայրենիքին եւ Հայ եկեղեցուն:**

**Այս տխուր առիթով, Լոնդոնի Թեքեյան հիմնադրամի, ինչպես նաեւ «Թեքեյան կենտրոն» հիմնադրամի (Հայաստան) հոգաբարձուների խորհրդի անունից մեր խոր ցավակցություններն ենք հայտնում դոկտ. Ա. Ծուլիկյանի հարազատներին, ընկերներին եւ բարեկամներին: Նրա հիշատակը վառ կմնա բոլոր նրանց հիշողություններում, ովքեր հարգել ու գնահատել են նրան:**

ՎԱՐԴԱՆ ՈՒԶՈՒՆՅԱՆ
«Թեքեյան Կենտրոն» հիմնադրամի նախագահ
Լոնդոնի Թեքեյան հիմնադրամի պատվավոր քարտուղար

# Լիդիցեում կանցկացվի հոբելյանական 40-րդ մանկական ցուցահանդեսը

## *Հայաստանի դեսպանը հանդիպեց թանգարանային համալիրի տնօրենին եւ հարգեց զոհերի հիշատակը*



**Հունվարի 30-ին Չեխիայի Լիդիցե գյուղի թանգարանային համալիրում տեղի ունեցավ Չեխիայում ՀՀ դեսպան Տիգրան Սեյրանյանի հանդիպումը թանգարանային համալիրի տնօրեն Միլոշ Չերվենցիլի եւ պատկերասրահի պատասխանատու, Միջազգային ցուցահանդեսի համակարգող Իվոնա Կասալիցկայի հետ: Հայաստանի դեսպանը նախ ներկայացրեց Հայաստանի դեսպանության գործունեության եւ ՀՀ արտաքին քաղաքականության հիմնական ուղղությունները, այնուհետեւ տեղի ունեցավ մտքերի փոխանակություն: Պարոն Չերվենցիլը ներկայացրեց համալիրի կողմից իրականացվող ծրագրերը, նաեւ շեշտեց, որ այլեւս չեն կարող Լիդիցեն վերածել քաղաքական շահարկման տեղի, նկատի ունենալով նախկինում ադրբեջանցիների կողմից Խոջալուին նվիրված միջոցառումների կազմակերպումը: Հայաստանի դեսպանը ծանոթացավ նաեւ թանգարանի եւ պատկերասրահի ցուցադրություններին, գրառում կատարեց թանգարանի հուշագրքում: Հիշեցնենք, որ 70 տարի առաջ այս գյուղի բնակչության մեծ մասը՝ 340-ից ավելի մեծահասակներ ու երեխաներ բնաջնջվել են ֆաշիստների կողմից:**

**Հոբելյանական 40-րդ ցուցահանդեսի մասին տեղեկություններ տվեց տիկին Կասալիցկան: Անցած տարիներին հայաստանցի պատանիների աշխատանքները նույնպես արժանացել են մրցանակների:**

**Հայաստանի եւ Սփյուռքի դպրոցահասակ երեխաները կարող են մասնակցել ՅՈՒՆԵՍԿՕ-ի հովանու ներքո անցկացվող այս միջազգային ստուգատեսին: Այս տարվա թեման կապված է չեխ հայտնի նկարիչ, քանդակագործ, անիմատոր, չեխական տիկնիկային եւ մուլտիպլիկացիոն կինոյի հիմնադիր Յիրժի Տրնկայի անվան հետ: Հետեւաբար ներկայացվելիք աշխատանքների թեման պետք է լինի թատերական, այն է՝ նվիրված տիկնիկային, թատերական կամ կինոհերոսներին, իսկ մեծահասակ երեխաները պետք է նկարեն թատրոնի պատմությունն ու հայտնի թատրոններին նվիրված աշխատանքներ Մրցույթին կարող են ներկայացնել ինչպես գրաֆիկական ու գեղանկարչական աշխատանքներ, այնպես էլ լուսանկարներ եւ կերամիկայից աշխատանքներ: Մանրամասնությունների համար կարող եք այցելել հետեւյալ կայքէջը՝ www.mdvv-lidice.cz**

ՀԱ Լիդիցե Պրահա

# Ադրբեջանական «հինգերորդ զորասյուներ» եվրոպական երկրներում

Ի դեմս Մեհմեդ Ալի Բիրանդի հարեւան երկրում նոր «թշնամի» են հայտնագործել։ Բայց մենք չէինք ցանկանա խորամուխ լինել Բիրանդ-ադրբեջանական մամուլ բանավեճի «սահմաններում»։ Իրենց խնդիրն է՝ ինչ եւ ինչպես են ասում, եւ ով է արդարացի, ով՝ ոչ։ Կարծում ենք՝ երկու կողմն էլ առնվազն կեղծում են Թուրքիա-Ադրբեջան տարաձայնությունների իրական պատճառների հարցում։

Ավելի կարեւոր է մի հրապարակման հետեւյալ ձեւակերպումը. «...Ադրբեջանում ավելի մեծ նշանակություն են տալիս իրական արարքներին։ Ադրբեջանը Թուրքիայի հետ եղբայրական հարաբերությունները ցուցադրում է ամեն ինչում, սկսած այդ երկիր տարածաշրջանում ամենացածր գներով գազ մատակարարելուց, վերջացրած Ֆրանսիայի Սենատի որոշման դեմ ամենատարբեր երկրներում բողոքի բազմահազարանոց ակցիաներով, որոնց մեծ մասը կազմակերպվել է ադրբեջանական դիասպորային պաշտոնական կառույցների կողմից։ Այդ ժեստն անհնարին կլիներ, եթե դրա համար չլիներ մեր երկրի բարձրագույն ղեկավարության համաձայնությունը»։

Նախ, ի՞նչ է նշանակում «ադրբեջանական դիասպորական պաշտոնական կառույցներ» ասվածը։ Պե՞տք է, արդյոք, եզրակացնել, որ այդ «կառույցներն» ոչ այլ ինչ են, քան Ադրբեջանի իշխանությունների կողմից աշխարհի ամենատարբեր երկրներ գործուղված գործակալներ։ Չէ՞ որ այլ դեպքերում Բաքվի քարոզչությունը պնդում է, որ «ի տարբերություն մշտապես «թափառական» հայերի, ադրբեջանցիները հայրենասեր են եւ երբեք իրենց հողը չեն լքում»։

Ինչո՞ւ հանկարծ «հայրենասեր ադրբեջանցիները» որոշել են հայրենիքից հեռանալ եւ «դիասպորական կառույցներ» ստեղծել աշխարհի զանազան երկրներում։ Հատկապես՝ Եվրոպայում եւ Միացյալ Նահանգներում։ Պարզվում է, դա արվել է, որպեսզի նրանք «հակակշռեն» հայկական Սփյուռքին։ Այդ կերպ ադրբեջանական իշխանությունները, սակայն, փաստորեն այլ երկրներում ստեղծել են «հինգերորդ զորասյուներ», որոնք ամեն պահի ընդունակ են իրավիճակ ապակայունացնել։

Երկրորդ հանգամանքն այն է, որ ադրբեջանական քարոզչությունը բաց տեքստով վկայում է, որ «դիասպորական կառույցներն» առանց Իլհամ Ալիեւի «համաձայնության», պետք է հասկանալ՝ առանց նրա հրահանգի, ոչինչ չեն ձեռնարկում։ Ստացվում է, որ Եվրոպայում եւ Միացյալ Նահանգներում ունենալով դիվանագիտական պաշտոնական ներկայացուցչություններ, Իլհամ Ալիեւը նաեւ «հանրային ազդեցության» կառույցներ է վերահսկում։

Եվ եթե վաղը եվրոպական որեւէ երկրի ադրբեջանական «համայնքը» բողոքի ակցիա կազմակերպի, ապա դա պետք է գնահատել իբրեւ Իլհամ Ալիեւից ուղղակի հրահանգված քայլ։ Պաշտոնապես, մինչդեռ, Բաքուն հանդես է գալիս այլ երկրների ներքին գործերին չմիջամտելու հավաստիացումներով։

Վերջին ժամանակներս ադրբեջանական կողմը նոր կեցվածք է որդեգրել։ Եվրոպական երկրներ գործուղված հանձնակատարներն ամեն կերպ փորձում են կապեր հաստատել ծագումով իրանցի էթնիկ «ադրբեջանցիների» հետ։ Քանի որ բազմահազար «համայնք» դժվար է ստեղծել եւ հոգալ կեցության ծախսերը, Իլհամ Ալիեւը որոշել է օգտագործել «պատրաստի հումքը»։ Այն է՝ իր վերահսկողության տակ առնել ամենատարբեր պատճառներով Իրանից Եվրոպա մշտական բնակության տեղափոխված «ադրբեջանցիներին»։

Նիդեռլանդներում նման փորձ արվել է, բայց՝ անհաջող։ «Մեր եւ իրանցի ադրբեջանցիների ընկալումները խիստ տարբերվում են»,- ստիպված է եղել խոստովանել այդ երկրում «ադրբեջանական համայնքի ղեկավարը»։ Թուրք- ադրբեջանական քարոզչական բանավեճն, այսպիսով, բացահայտեց եւս մեկ իրողություն՝ Ադրբեջանը եվրոպական երկրներում վերահսկում է որոշակի կառույցներ, որոնք գործում են «համայնքային»-ի կարգավիճակով, բայց իրականում կատարում Իլհամ Ալիեւի այս կամ այն հանձնարարությունը։

Արդյոք սա նույն եվրոպական երկրների համար ահազանգ չէ՞։ Նրանց համար ցանկալի՞ է ունենալ «հինգերորդ զորասյուներ», որոնք կառավարվում են այլ երկրից։ Տվյալ դեպքում՝ Ադրբեջանից։ Չէ՞ որ ամեն երկրի անգամ հանրային կարծիքի վրա այլ պետության նախաձեռնությամբ եւ հրահանգով արված որեւէ ազդեցություն ոչ այլ ինչ է, քան միջամտություն նրա ներքին գործերին։ Չէ՞ որ գործուղված «համայնքները» նույն այդ երկրների հետ որեւէ առնչություն չունեն։ Ամենայն հավանականությամբ, նույն նպատակն է հետապնդում նաեւ եվրոպական երկրներ «ուսանողներ» ուղարկելը։

Կամա թե ակամա, բայց ադրբեջանական կողմը մատնել է իր գաղտնիքներից մեկը։ Եվրոպական երկրները, թվում է, պետք է արձագանքեն համարժեքորեն։ Ելնելով գոնե սեփական ներքին անվտանգության առաջնահերթությունից։ Ուշագրավ է, որ զուգահեռաբար ադրբեջանական մամուլը տեղեկատվություն է տարածել, թե «Ֆրանսիայում ուսանող ադրբեջանցիները որոշել են վերադառնալ հայրենիք»։ Իսկ գուցե զգուշացել են, որ կարտաքսվե՞ն։

ՎԱՀՐԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ

# Կորեայի նախագահը Թուրքիայում կստորագրի ԱԷԿ-ի կառուցման համաձայնագիր

**Կորեայի Հանրապետության նախագահ Լի Պեն Բակը պաշտոնական այցով Թուրքիայում կլինի փետրվարի 4-7-ը։ Ուղեւորության շրջանակներում քննության կառնվի ատոմային էլեկտրակայանի շինարարության ոլորտի համագործակցությանը վերաբերող համաձայնագիրը։ Այդ մասին հաղորդում է newsru.co.il կայքէջը։**

**«Հյուրիեթ» թերթի տեղեկացմամբ, Թուրքիան արդեն ծրագրել է երկու ատոմակայանի շինարարություն։ Առաջինը կառուցելու են ռուսաստանցի մասնագետները։ Ավելի վաղ Անկարան Սեուլի հետ պայմանավորվել էր եւս մեկ ԱԷԿ-ի կառուցման առնչությամբ, սակայն կողմերը լիակատար համաձայնության չէին հասել։ Այդ պատճառով Թուրքիայի կառավարությունը դիմել էր Ճապոնիային, բայց «Ֆուկուշիմա-1»-ի վթարից հետո Անկարան վերսկսել էր բանակցությունները Սեուլի հետ։**



**Հավանական է, որ ԱԷԿ-ի կառուցման պայմանագիրը ստորագրվի Լի Պեն Բակի առաջիկա այցի օրերին։**

**Միջուկայինից ոլորտից բացի, Թուրքիան Կորեայի հետ համագործակցում է ռազմական ոլորտում, մասնավորապես թուրքական «Ալթայ» տանկի ստեղծման, հաուբիցի մշակման եւ թուրք օդաչուների պատրաստման նախագծերում։**

**Թուրքիայում ԱԷԿ-ի կառուցումը հետաքրքրում է նաեւ չինացի եւ իրանցի մասնագետներին։**

# Վենեսուելան հետ բերեց իր ոսկու պաշարը

**Վենեսուելայի իշխանությունները հայտարարել են, որ ավարտվել է ամերիկյան եւ եվրոպական բանկերից երկրի ոսկու պաշարը հետ բերելու գործողությունը։ Այդ մասին հաղորդում է Ֆրանսպրես գործակալությունը։**

**Վենեսուելայի ԿԲ ղեկավար Նելսոն Մերենտեսի խոսքերով՝ 2011-ի նոյեմբերին սկսված եւ օրերս ավարտված գործողության ընթացքում արտասահմանյան բանկերից հետ է բերվել ընդհանուր առմամբ 160 մետրական տոննա (176 տոննա) թանկարժեք մետաղ՝ 9 մլրդ դոլար արժողությամբ։ Երկիր վերադարձված ոսկին զետեղվել է ԿԲ պահեստարաններում։**

**Արտասահմանյան բանկերում պահվող ոսկու պաշարները երկիր վերադարձնելու մտադրության մասին հայտարարել էր նախագահ Ուգո Չավեսը 2011-ի օգոստոսին։ Նրա խոսքերով՝ տվյալ ձեռնարկումը նավթի արտահանումից իր հիմնական եկամուտը ստացող Վենեսուելային պետք է պաշտպանի ԱՄՆ-ի եւ Եվրոպայի հնարավոր տնտեսական բարդություններից։**



# ՄԱԿ-ի ԱԽ-ում մեծամասնությունը կողմ է հակասիրիական բանաձեւի նախագծին

## *Ռուսաստանը մտադիր չէ տեղի տալ*



ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդն այսօր քննության կառնի Սիրիայի վերաբերյալ Արաբական լիգայի պատրաստած բանաձեւի նախագիծը, որը ենթադրում է նախագահ Բաշար Ասադի պաշտոնաթողություն։ Ռոյթեր գործակալության նախնական տեղեկությունների համաձայն, ԱԽ անդամ 15 երկրներից առնվազն 10-ի ներկայացուցիչները քվեարկելու են բանաձեւի նախագծի օգտին։ ԱՄՆ-ը հույս ունի նախքան քվեարկությունը համոզել նաեւ մյուսներին։

Արեւմուտքն առայժմ դիվանագիտական միջոցներով փորձում է ճանապարհ հարթել այսպես կոչված «սիրիական խնդրի» լուծման համար, որին խոչընդոտում է Մոսկվան։ Քվեարկության նախօրեին ՄԱԿ-ի ԱԽ-ում գործընկերները փորձում են Ռուսաստանին համոզել, թե նոր նախագիծը Սիրիայի դեմ ուղղված ռազմական գործողության հնարավորություն իբր չի տալիս։

Մոսկվան, հիշելով, թե անցյալ տարի իրեն ինչպես խաբեցին Լիբիային վերաբերող համանման մի բանաձեւով, չի շտապում անսալ Արեւմուտքի հորդորներին։ ԱՄՆ-ը հավաստիացնում էր, թե այս անգամ պատերազմ չի լինի, որ պարզապես հարկավոր է Սիրիայում կանգնեցնել արյունահեղությունը։ Մոսկվային համերաշխության կոչեր են անում։ ԱՄՆ պետքարտուղար Հիլարի Քլինթոնը երեկ ամբողջ օրը փորձում էր հեռախոսով կապ հաստատել ՌԴ արտգործնախարար Սերգեյ Լավրովի հետ, բայց վերջինս զբաղված էր Ավստրալիայում սկսած ուղեւորության պատճառով եւ անհասանելի էր։

Ինտերֆաքս գործակալությունն ընդգծում է, որ Արեւմուտքը շատ է ուզում ՄԱԿ-ի ԱԽ-ում անցկացնել նոր բանաձեւի նախագիծը, բայց եթե անգամ Չինաստանը չմասնակցի քննարկմանը, Ռուսաստանը մտադիր չէ փոխել իր տեսակետը։

# Չեխերն ու բրիտանացիները մերժեցին ԵՄ բյուջեի կայունության պայմանագիրը

Չեխիայի իշխանությունները հրաժարվել են միանալ Եվրամիության բյուջեի կայունության պայմանագրին։ Այդ մասին հաղորդում է Ֆրանսպրեսը, վկայակոչելով Շվեդիայի վարչապետ Ֆրեդրիկ Ռայնֆելդտի հայտարարությանը։ Ավելի վաղ պայմանագրին միանալուց հրաժարվել էին Մեծ Բրիտանիայի իշխանությունները։

Այսպիսով, ԵՄ ֆինանսական հիմքն ամրապնդող համաձայնագիրը Բրյուսելի գագաթաժողովում կստորագրեն միության անդամ 27 պետություններից 25-ը։ Լոնդոնը դեռ դեկտեմբերին հայտարարել էր, որ չի ստորագրելու այդ փաստաթուղթը, իսկ Պրահան հրաժարվեց ստորագրել խորհրդարանում տվյալ որոշումը համաձայնեցնելու բարդությունների պատճառով։

2011-ի դեկտեմբերին Բրյուսելում ԵՄ երկրների ղեկավարները պայմանավորվել էին միության անդամ երկրների բյուջեի պակասորդի թույլատրելի վերին սահմանը ներկայիս ՀՆԱ 3 տոկոսից իջեցնել ՀՆԱ 0,5 տոկոսի։ Ըստ որում բյուջեի կայունության պայմանագիրը որեւէ երկրում բյուջեի պակասորդի գերազանցման դեպքում ենթադրում է պատժամիջոցների համակարգ։

Չեխիայի եւ Մեծ Բրիտանիայի մերժած փաստաթուղթը ենթադրում է, որ եվրոգոտու երկրները բյուջեի պակասորդի վերին սահմանը կամրագրեն ազգային սահմանադրության մեջ կամ սահմանադրային բնույթ ունեցող այլ փաստաթղթերում։ Դրանով իսկ Եվրոմիությունը զգալիորեն կխստացնի եվրոգոտու երկրների բյուջետային քաղաքականության սկզբունքները։

ԵՄ ղեկավարության առաջարկած ժամանակացույցի համաձայն, բյուջեի պակասորդը սահմանափակող փաստաթուղթը մինչեւ առաջիկա մարտ ամիսը պետք է ստանա եվրոգոտու բոլոր երկրների, ինչպես նաեւ դրանով շահագրգիռ ԵՄ մյուս երկրների հավանությունը։ Պայմանագիրը պաշտոնապես պետք է կիրարկվի 2013-ից։

Եվրոգոտում բարեփոխումների անհրաժեշտությունը պայմանավորված է գոտու երկրների պարտքային սուր ճգնաժամով, որի հետեւանքով մի շարք պետություններ հայտնվել են դեֆոլտի սպառնալիքի առջեւ։ Դիտորդներից շատերի կանխատեսումների համաձայն, եթե մոտ ժամանակներս պարտքային խնդիրները լուծել չհաջողվի, ապա եվրոգոտին կարող է փլուզվել։

# Մշակույթ

*Երեւանի օպերային թատրոնի առաջատար եւ խոստումնալից մեներգչուհիներից է Վարսենիկ Ավանյանը: Ավարտել է Երեւանի պետական կոնսերվատորիան՝ Սերգեյ Դանիելյանի կուրսը: Մոսկվայում սովորել է Չայկովսկու անվան պետական կոնսերվատորիայի ասպիրանտուրայում: 2002 թ. եղել է Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի օպերային ստուդիայի մեներգչուհիներից, 2006-ից օպերայի եւ բալետի թատրոնի մեներգչուհիներից է: Կատարել է Փառանձեմի դերերգը Տիգրան Չուխաջյանի «Արշակ 2-րդ» օպերայում, հաստվածաբար ներկայացվել է Ժորժ Բիզեի «Կարմեն» օպերան, որտեղ կատարել է Կարմենի դերերգը: Երգչուհու երգացանկում կան դերերգեր, որոնք գտնվում են նախապատրաստական փուլում. Ջ. Վերդիի «Աիդա» օպերայում՝ Ամներիս, «Դոն Կառլոս»-ում՝ Էբոլի, «Տրուբադուրում»՝ Ազուչենա, Չայկովսկու «Եվգենի Օնեգինում»՝ Օլգայի դերերգը, «Իոլանտա» օպերայում՝ Լաուրա, Արենսկու «Բախչիսարայի շատրվանը» օպերայում՝ Զարեմա, Բելլինիի «Նորմա» օպերայում՝ Ադալջիզա եւ այլն...*

*Երգչուհին օժտված է առինքնող ձայնով եւ արտաքինով, նրա կերտած յուրաքանչյուր կերպար դառնում է սիրելի եւ ջերմորեն ընդունվում հանդիսականի կողմից:*

**- Կա՞ն դերերգեր, որոնք Ձեզ համար առավել գուրգուրելի են:**

- Գուցե եւ առհասարակ դերերգեր կան, երբ անձնանձիր նվիրվում ես կերպարի կայացմանը, ապա կերպարը դառնում է գուրգուրելի: Կան կերպարներ, որոնց կայացման ճանապարհին հոգեբանական դժվարություններ են առաջանում, այդ կերպարները դժվարությամբ են բացվում, բայց երբ գործին սիրով ես նվիրվում, բոլոր դժվարություններն էլ արագորեն հաղթահարվում են:

**- Օպերային արվեստը երաժշտական եւ դրամատիկ տարրերի համադրության արդյունք է, կա՞ն դերերգեր, որոնք մարմնավորելիս Ձեզանից առավել է պահանջվել դրամատիկական ունակություններ:**

- Արշակ 2-րդում Փառանձեմի դերերգը ինձանից առանձնակի ջանքեր չէր պահանջում, հերոսուհին հայուհի էր, որի հոգեբանական կերտվածքը բնականաբար ինձ լավ ծանոթ էր եւ հարազատ իմ բնույթին: Կարծում եմ՝ բոլոր օպերային հայ արտիստուհիների էության մեջ նստած են եւ «Սայաթ-Նովայի» Աննան եւ Ալմաստի կերպարը համանուն օպերայից: Բայց այլ է մոտեցումը Կարմենի կերպարը ստեղծելիս. պարտավոր ես դուրս գալ ազգայինի սահմաններից եւ կերպարի մեջ որոնել ու գտնել մարդկային շերտեր՝ միեւնույն ժամանակ չկորցնելով անկեղծությունն թյամբ: Եթե կողքին մի այլ օպերային թատրոն էլ գոյություն ունենար, ապա կարող էր մրցունակությունը իրեն զգացնել տալ, ինչ որ առաջխաղացում կակնկալվեր, իսկ այսպես, ցավոք, դեռ տեղում ենք դոփում:

**- Ինչպիսի՞ն է արդի հայ մշակութային մթնոլորտի Ձեր գնահատականը:**

- Վիճակը մխիթարական չէ, չնայած կան երաժիշտներ, որոնք ուժերի գերագույն լարումով փորձում են նշաձողը բարձր պահել: Մտահոգիչ է այն հարցը, թե կգտնվի՞ արդյոք այն փոխարինող սերունդը, որը ցանկալի բարձրության վրա կպահի եղած հաջողությունների նշաձողը: Այստեղ միայն ձայնի խնդիրը չէ, կա նաեւ արհեստավարժության գործոնը եւ մի հանգամանք, որ արտիստականությունն ու ձայնային տվյալները պետք է համապատասխանեն կերպարի առանձնահատկություններին: Շնորհաշատ ուժեր անշուշտ կան, բայց բացակայում է ստեղծագործական շղթան. արհեստավարժ կոմպոզիտոր, բարձրաճաշակ ստեղծագործություն եւ նույն ստեղծագործության խորը, պարված կատարում: Արվեստի յուրաքանչյուր բարձրարժեք գործ կարող է ծնունդ առնել նաեւ սոցիալ-հոգեբանական դժվարին պայմաններում, եթե իհարկե նման ստեղծագործությունների պահանջարկը կա: Ցավոք նյութը եւ նյութականի մրցավազքը այսօր դարձել է առաջնա-

# Ստեղծագործական շղթայի բացակայությունը

## *Հարցազրույց օպերային թատրոնի մեներգչուհի մեցցո-սոպրանո Վարսենիկ Ավանյանի հետ*

**- Անցյալ տարվա վերջին տեղի ունեցավ Ձեր վերջին մենահամերգը «Գաֆէսճեան» արվեստի կենտրոնում: Ինչո՞վ էիք առաջնորդվել երգացանկի ընտրության հարցում եւ մենահամերգը ինչպիսի՞ արձագանքներ ունեցավ:**

- Անցյալ տարի Չայկովսկու 170-ամյակն էր, ես կատարեցի վոկալ շարք, որը նա նվիրել է երգչուհի մադամ Դեզիրե Արտոյին: Վոկալ շարքի բնագիրը ֆրանսերեն է, ես որոշեցի այն կատարել բնագրով, թեեւ ընդունված է կատարել նաեւ ռուսերեն: Լրանում էր նաեւ Ռոբերտ Շումանի 200-ամյակը, եւ Շումանի ստեղծագործություններից կատարեցի «Կնոջ սերն ու կյանքը» խորագիրը կրող վոկալ շարքը: Շարքը կոմպոզիտորը նվիրել է հայտնի դաշնակահարուհի Կլարային, որը հետագայում դարձել է իր կինը: Եվ ընդունված կարգ է, որ նման շարքերը կատարվեն առանց ընդհատումների եւ առանց ծափողջյունների, եւ այդ վոկալ շարքը ես կատարեցի գերմաներենով: Իմ այս կատարումները առնչվում էին տարվա հոբելյանական տարեթվերին, բայց ես կատարեցի նաեւ Շոստակովիչի «Իսպանական երգեր» կոչվող վոկալ շարքը: Շարքը Շոստակովիչի Իսպանական հայտնի երգերի վերամշակումներն են: Կան այդ շարքի ե՛ւ իսպանական, ե՛ւ ռուսական տարբերակները: Համերգի եզրափակիչ մասում կատարեցի Շուբերտի եւ Շտրաուսի ստեղծագործություններից: Բոլոր ստեղծագործությունները սիրո թեմայով էին, համերգը կայացավ 2010թ դեկտեմբերին, բայց ամբողջ համերգի ընթացքում թեւածում էր գարնանային շունչը: Այն ոչ թե օպերային, այլ կամերային բնույթի էր: Շոստակովիչի այդ ստեղծագործությունները մեզանում կատարվում են առաջին անգամ: Իսկ Չայկովսկու ստեղծագործությունները իմ կատարմամբ հնչում էին 2-րդ անգամ, եւ հանդիսատեսի արձագանքը շատ ջերմ էր ու ոգեւորող: Ցավոք, դահլիճում երաժշտագետներ չկային, դրական էր նաեւ ներկա գործընկերներիս կարծիքը: Համերգի ընթացքում ինձ նվագակցում էր դաշնակահարուհի Նարա Ստեփանյանը, որի հետ մեր ստեղծագործական համագործակցությունը տարիների վաղեմություն ունի: Համերգները ղեկավարում էր մեր երաժշտարվեստի երեւելիներից Արամ Թալալյանը: Ողջունելի է այն, որ «Գաֆէսճեան» արվեստի կենտրոնը մշտապես տրամադրում է իր համերգասրահը դասական համերգներին:

**- Ձեր ստեղծագործական ճանապարհին եղել են ճակատագրական շրջափուլեր:**

- Կարծում եմ, ստեղծագործական ճանապարհին արվեստագետի համար բոլոր շրջափուլերն էլ ճակատագրական են լինում: Իմ Հայաստան վերադարձը կապված էր ստեղծագործական ծրագրերի հետ: Հրավիրված էի Արշակ 2-րդ օպերայում կատարելու Փառանձեմի դերերգը:



ու անմիջականությունը: Առայժմ Կարմենի դերերգը ամբողջությամբ չեմ կատարել, եղել են առանձին դերերգեր, դուետներ, ամբողջությամբ կատարելու դեպքում գուցե ինձ հաջողվի ցանկալի արդյունքի հասնել, ստեղծել Կարմենի լիարժեք կերպարը: Հուսով եմ, շուտով Կարմենը կբեմադրվի: Ցավոք, հայրենի օպերային բեմում իմ զբաղվածության աստիճանը ինձ չի գոհացնում, այն կերպարները, որ հասցրել եմ ստեղծել, քանակական առումով շատ քիչ են:

**- Ինչպիսի՞ն է այսօրվա օպերային հայ հանդիսատեսը:**

- Ջերմ ու զգայուն հանդիսատես ունենք: Պետք է հավատալ ու վստահել այսօրվա հանդիսականին: Շատ բան կախված է մեր՝ արտիստների վարպետությունից ու անկեղծ նվիրումից, եթե մենք կարողանանք բարձրարժեք արվեստ մատուցել, հանդիսատեսն ինքն էլ ձգտելու է առավելագույնին: Հանդիսականի ճաշակ բարձրացնելու առումով մենք պետք է համբերատար եւ հետեւողական լինենք: Պետք է թարմություն եւ նորարարություն: Տարիներ շարունակ նույն ներկայացումները կարող են հոգնեցնել ու ձանձրացնել հանդիսականին, պետք է նոր դեմքեր, նոր թեմաներ, նոր հարցադրումներ: Իհարկե ես հասկանում եմ, որ օպերային արվեստը թանկ հաճույք է, ծախսատար է: Մեծ հաշվով մեր մոտ օպերային մշակույթ ձեւավորված չէ: Խորհրդային ժամանակներից մեր օպերային արվեստում սկիզբ առած խանդավառությունը կարծես թե շարունակություն չունեցավ: Աշխարհում ձգտում են մինիմալիզմին. քիչ մասնակիցներով նվագախմբեր, սակավ դեկորացիա, փոքրածավալ բեմ եւ առավելագույն արդյունք: Գուցե մեզանում շատ բան պայմանավորված է Ազգային ակադեմիական թատրոնի եզակիությամբ, առաջին պլան են մղվել ցածրակարգ շոուներ եւ շատ հաճախ արվեստի բարձրակարգ գործերը հանիրավի անտեսվում են:

**- Պետական աջակցություն կա՞:**

- Հուսադրող ու ոգեւորող քիչ բան կա, առանձին ներկայացումներ հովանավորելը դեռ աջակցություն չէ: Ցավոք մեզանում բացակայում է մշակութային ազգային ծրագիրը: Ժամանակի հրամայականը այն է, որ արտերկրից օպերային ժամանակակից արվեստի լավագույն վարպետներ հրավիրվեն, որոնք մեր շնորհալի ուժերի հետ անցկացնեն վարպետության դասեր, մրցունակ դաշտի բացակայություն, մասնագիտությունը կատարելագործելու հնարավորության բացակայություն, ահա թե ինչն է անհանգստացնում այսօրվա օպերային արվեստի կարող ուժերին: Ինչպես է լինում, երբ մեկ-երկու տարվա պատմություն ունեցող նվագախումբը ստանում է պետական կարգավիճակ, եւ հակառակը՝ տարիների փորձառություն եւ ավանդներ ունեցող նվագախումբը հանկարծ զրկվում է պետական հոգածությունից ու աջակցությունից: Բայց ուզում եմ միտք լավատեսությամբ ավարտել, որ մեր մշակույթի առաջընթացը ապահովող պատասխանատուները իրենց հետագա քայլերում առավել վճռական եւ հետեւողական կգտնվեն:

**- Օպերային արվեստը ամենապահպանողականներից է. այսօրվա օպերային ներկայացումներում ո՞րն է գերակայում, ավանդությո՞ւնը, թե՞ նորարարությունը:**

- Ավանդույթը: Ցավոք, նոր մտածողության առջեւ առայժմ դռները դժկամորեն են բացվում: Գուցե թե լավ է, որ մենք պահպանողական ազգ ենք, բայց մշակույթի զարգացման առումով պետք է առաջնայնությունը տրվի նորին, նոր մտածողությանը: Անցյալ տարի «Ալմաստ» օպերան բեմադրելու համար երեւան հրավիրվեց Պերմի օպերային թատրոնի գեղ. ղեկավարն ու գլխավոր ռեժիսորը, վերջինս փորձ արեց բեմադրությունը իրականացնել նորարարական մոտեցմամբ, բայց այն մեզանում սվիններով ընդունվեց, պարզվեց որ մենք պատրաստ չէինք ընկալելու այդ նորարարությունը, առհասարակ մենք շատ ու շատ բաների պատրաստ չենք:

**- Ժամանակակից հայ կոմպոզիտորներից ո՞ւմ գործերն են Ձեզ առավել հոգեհարազատ:**

- Հրաշալի կոմպոզիտորներ ունենք իհարկե. Տիգրան Մանսուրյան, Ռոբերտ Ալթունյան, Լեւոն Չաուշյան... Արամ Թալալյանը «Գաֆէսճեան»-ում հաճախակի կատարում է հայ ժամանակակից կոմպոզիտորների ստեղծագործությունները եւ հրաշալի համերգներ են ստացվում: Շատ հարուստ արմատներ ունենք, բայց շատ հաճախ վերցնում ենք ուրիշների անորակները եւ դարձնում ենք մերը, ինչի՞ է հանգեցնելու այս ամենը, չգիտեմ, այս էլ յուրօրինակ մշակութային ինքնաուրացում է:

ՇՈՒՇԱՆԻԿ ՂԱԶԱՐՅԱՆ

---

ՌԻՇԱՐ ԺԵՐԱՆՅԱՆ

# Նորությունների, որոնումների նկարիչը



**Ֆրանսահայ նկարիչ Ռիշար (Խաչատուր) Ժերանյանը միջազգային համբավի հասած արվեստագետ է: Հավասարապես զբաղվել է ե՛ւ գեղանկարչությամբ ե՛ւ գրաֆիկայով: Արվեստի հաջողության գաղտնիքը պարզության մեջ է տեսնում: Նրա արվեստը ամբողջովին երաժշտական մարմնավորում է: Իր կտավներում էլ ցույց է տալիս կյանքի դրական կողմերը:**

**Վերջերս լրացավ նկարչի 90-ամյակը: Իր հոբելյանի առթիվ նա եկել էր Հայաստան: Հայաստանի ազգային պատկերասրահում կազմակերպվեց նրա նկարների ցուցահանդեսը: Ժամանակին Ֆրանսիայի նկարիչների միության 420 անդամներից միայն 4-ն են հայ եղել՝ Գառզուն, Ժանսեմը, Ասատուրը եւ Ժերանյանը: Արվեստագետը խմբակային եւ անհատական ցուցահանդեսներ է ունեցել աշխարհի տարբեր երկրներում: Շահել է բազմաթիվ մրցանակներ, ստացել լայն ճանաչում, բայց իր իսկ խոսքերով ամենահիշարժանը իր համար 1989-ին Հայաստանում ստացած Մարտիրոս Սարյանի անվան մրցանակն է եղել, այն իր համար բարոյական նշանակություն ուներ: Ռիշար Ժերանյանը հայրենասեր է: Բազմաթիվ անգամ այցելել է իր պատմական հայրենիքը, շրջել Հայաստանով մեկ, եղել Արեւմտյան Հայաստանում: Արդյունքում՝ Հայաստանին վերաբերող կտավների շարք ստեղծել:**

**Բարեգործական աշխատանքներ է ծավալել ի նպաստ Հայաստանի, մանավանդ երկրաշարժից հետո, բազմաթիվ նվիրատվություններ արել:**

**Ժերանյանը ներկայանում է նաեւ գրաֆիկայի ինքնատիպ վարպետ: Իր գրաֆիկական աշխատանքներում ցանկանում է հեռանալ ավանդական, հայտնի ձեւերից եւ, ինչպես գեղանկարչության մեջ, ստեղծել ամփոփ ձեւեր: Նրա գծանկարչական թեմաներից մեկը կանացի մերկ մարմինն է: Արվեստաբանների կարծիքով նրա մերկ նկարները մաքուր են, զուրկ էրոտիկ դիրքորոշումից եւ մատուցվում են զուտ որպես արվեստ: Ժերանյանը արվեստի մեջ նորություն բերելն է կարեւորում: Նա որոնումների, պրպտումների նկարիչ է: Չի ցանկանում կրկնել ուրիշների արածը: Դրա համար էլ սիրել է ճանապարհորդել, նոր վայրեր տեսնել, ուսումնասիրել:**

**Ամեն առավոտ արթնանալիս նոր կյանք է սկսվում: Առանց էվոլյուցիայի ստեղծագործական կյանքը չի կարող հարատեւել: Նկարչությունն էլ մյուս արվեստների նման նա գիտություն է համարում: «Նկարի եւ մարդու միջեւ զգայական հարաբերություն պետք է ստեղծել, այն պետք է ներազդեցություն գործի մարդու վրա», ասում է արվեստագետը:**

**Ռիշար Ժերանյանը ինքնատիպ նկարիչ է: Նրա արվեստը գնահատել են հայտնի, հեղինակավոր արվեստաբաններ: Նկարչի աշխատանքները ցուցադրվում են բազմաթիվ երկրների թանգարաններում, պատկերասրահներում: Մոսկվայի Պուշկինի անվան թանգարանում արվեստագետի կտավները ցուցադրվում են Պիկասոյի, Լեժեի, Դալիի աշխատանքների կողքին: Նկարչի փարիզյան, պրովանսյան նատյուրմորտները, բնանկարները պարուրված են բացառիկ անկեղծությամբ: Նրա արվեստը գրավում է ջերմությամբ, ազնվությամբ:**

ԱԻԴԱ ԱՐՇԱԿՅԱՆ

# Լեւոն Արոնյան. «Թարմ ուղեղն էլ ինչ-որ բան արժե»

***Շախմատի Վեյք Ան Զեեի մրցաշարի ավարտից հետո Լեւոն Արոնյանը հարցազրույց է տվել Chess-news.ru կայքի լրագրող* Եվգենի Սուրովին*, որը որոշ կրճատումներով ներկայացնում ենք «*Ազգի*» ընթերցողներին:***



**- Լեւոն, ինչպիսի՞ն են տպավորությունները գլխավոր մրցանակը ստանալուց հետո, երբ հայրենակիցները դահլիճում պարզեցին Հայաստանի դրոշը:**

- Շատ գոհ եմ, որ հաջողվեց շատ լավ խաղ ցուցադրել: Իրոք արդյունքը տպավորիչ է: Շատ ուրախ եմ, որ իմ խաղով բավականություն պատճառեցի դահլիճում հավաքվածներին ու իմ երկրպագուներին:

**- Պարգեւատրումից հետո նշեցիր, որ սա քո կարիերայի ամենահաջողված մրցաշարն էր: Իրո՞ք դա այդպես է:**

- Ինձ թվում է՝ այո: Իհարկե, շատ մրցաշարերում եմ հաղթել, սակայն միշտ չէ, որ հաջողվել է վերահսկել խաղի ընթացքը: Իսկ այստեղ, ըստ իս, պարտիաների մեծամասնությունում իրադրությունն իմ վերահսկողության տակ էր:

**- Նաեւ հայտարարել էիր, որ այսօր առավոտյան ժամը 6-ին ես արթնացել: Ինչո՞վ էր դա պայմանավորված: Վճռորոշ պարտիայից առաջ հուզվո՞ւմ էիր:**

- Այո, հուզվում էի: Համոզված չէի՝ խաղալ հաղթանակի համար, թե՞ ոչ: Ի վերջո պրագմատիզմը հաղթեց եւ որոշեցի խաղալ հանգիստ ու հուսալի: Ինչպես պարզվեց, մրցակիցս եւս դեմ չէր ոչ-ոքի արդյունքին, ինչն էլ ինձ թույլ տվեց դառնալ մրցաշարի հաղթող:

**- Իսկ ահա Ռաջաբովը նշել էր, որ հոգու խորքում հույս ուներ, որ դու կխաղաս հաղթանակի համար, որպեսզի վարկանիշդ ավելի ավելացնես:**

- Վարկանիշն ինձ համար այդքան մեծ նշանակություն չունի:

**- Ասուլիսի ժամանակ նաեւ նշել էիր, որ այդ հաջողությունն ինչ-որ չափով անակնկալ էր քո համար, քանի որ չէիր հասցրել որոշ թերություններ շտկել:**

- Անցած տարվա վերջում շատ մրցաշարերի եմ մասնակցել: Ստիպված էի կիրառել նորույթներիս մեծ մասը: Դրանցից հետո որոշեցի հանգստանալ, մեկ ամիս շախմատով ընդհանրապես չեմ զբաղվել: Ինձ թվում էր, որ դա կարող է վտանգավոր լինել, քանի որ այդ ընթացքում մրցակիցներն աշխատում էին: Բայց ինչպես պարզվեց, թարմ ուղեղն էլ ինչ-որ բան արժե: Բախտս բերեց, որ մրցակիցներիցս ոմանք իմ հին պատրաստությունների վրա բռնվեցին: Դա նման է նրան, որ թակարդ ես դնում ու սպասում ես:

**- Եվ շա՞տ ունեք այդպիսի թակարդներ:**

- Դրանք շատ քիչ են: Այս ուղղությամբ հարկավոր է աշխատել:

**- Հաջորդ մրցաշարը ո՞րն է լինելու քեզ համար:**

- Առայժմ այդ մասին չեմ մտածել: Միայն Կրամնիկի հետ մրցախաղն է:

**- Այսօր տեղեկություն ստացվեց, որ հավանաբար ապրիլի վերջին կայանա Լինարեսի մրցաշարը: Փաստորեն, դու չես մասնակցելու մրցաշարին:**

- Մենք լուրջ մարդիկ ենք եւ եթե Կրամնիկի հետ պայմանագիր ենք ստորագրել մրցախաղի անցկացման վերաբերյալ, ապա Լինարեսից պետք է հրաժարվել:

**- Իսկ ե՞րբ իմացար, որ Կրամնիկը ցանկանում է մրցել քեզ հետ:**

- Կրամնիկն ինձ էլեկտրոնային փոստով հարցում էր կատարել, թե կցանկանա՞մ խաղալ իր հետ: Իհարկե, ցանկությունս մեծ է: Ի տարբերություն Կրամնիկի, նման մրցախաղերի մեծ փորձ չունեմ, ուստի այն ինձ համար օգտակար կլինի:

**- Դո՞ւ էլ Կրամնիկի պես այդ մրցախաղը դիտում ես որպես հավակնորդների մրցաշարի նախապատրաստության փուլ:**

- Մրցախաղին լուրջ կմոտենամ, ինչպես ցանկացած մրցաշարի: Կաշխատեմ պատրաստ լինել ու լավ խաղ ցուցադրել:

**- Հաճա՞խ ես Կազանը հիշում:**

- Ընդհանուր առմամբ Կազանից քաղեցի ինձ անհրաժեշտ դասերը: Իսկ եթե խոսենք հիշելու մասին, ապա՝ ոչ:

**- Հարցը նրանում է, որ շախմատիստներից ոմանք նշում են, որ Կազանում կայացած հավակնորդների մրցախաղերն իրենց վրա որոշակի ազդեցություն են թողել: Քո կարիերայի վրա ի՞նչ ազդեցություն թողեց Կազանի մրցաշարը, որն անհաջող էր քեզ համար:**

- Ինձ թվում է, որ ազդեցություն թողել է: Դրանից հետո սկսեցի ավելի լրջորեն մոտենալ մրցաշարերին եւ հաջողությունների հասնել:

**- Նախկինի պես Բեռլինո՞ւմ ես բնակվում:**

- Նայած ժամանակ: Երեւանում եւ Բեռլինում: Հաճախակի Ավստրալիա եմ մեկնում:

**- Իսկ հայկական լրատվամիջոցների, շախմատի ղեկավարների կողմից արդեն արձագանք եղե՞լ է:**

- Իհարկե, ինձ գրում են, զանգահարում: Շատ ուրախ եմ: Ինձ համար էլ հաճելի է:

**- Վերջին հարցը: Շախմատի օլիմպիադան քեզ համար հավանաբար տարվա ամենագլխավոր մրցաշարերից մեկն է: Ինչպե՞ս ես գնահատում Հայաստանի հավաքականի հնարավորությունները:**

- Ամեն ինչ կախված է այն բանից, թե տղաներն ինչպիսի մարզավիճակում կգտնվեն: Կձգտեմ խաղալ ուժերիս լրիվ ներդրումով: Հուսով եմ, որ տղաները եւս այդպես տրամադրված կլինեն ու այս անգամ կհաջողվի մեզ լավագույն կողմերով դրսեւորել: Չնայած շատ գոհ եմ, որ մեր հավաքականը կրկին ապացուցեց, որ ուժեղագույնն է՝ նվաճելով աշխարհի չեմպիոնի տիտղոսը:

## Զամբիան ու Սուդանը կշարունակեն պայքարը

Ֆուտբոլի Աֆրիկայի գավաթի խաղարկությունում A եւ B խմբերում ավարտվեցին խմբային մրցաշարերը: A խմբից պայքարը կշարունակեն Հասարակածային Գվինեայի եւ Զամբիայի հավաքականները: Ընդ որում եթե առաջնության կազմակերպիչները հաջորդ փուլի ուղեգիրը նվաճել էին ժամկետից շուտ՝ տանելով 2 հաղթանակ, ապա Զամբիայի ընտրանին պայքարը շարունակելու իրավունք ստացավ 3-րդ տուրում Հասարակածային Գվինեայի հավաքականին հաղթելու շնորհիվ (1-0): A խմբի մյուս խաղում Լիբիայի հավաքականը 2-1 հաշվով հաղթեց սենեգալցիներին:

B խմբում 3-րդ անընդմեջ հաղթանակը տոնեց Կոտ դ'Իվուարի հավաքականը, որը 2-0 հաշվով պարտության մատնեց անգոլացիներին: 2-րդ ուղեգիրը նվաճեց Սուդանի հավաքականը, որը 2-1 հաշվով հաղթեց Բուրկինա Ֆասոյի ընտրանուն:

## Գավաթի եզրափակիչը կկայանա Գյումրիում

Ֆուտբոլի Հայաստանի գավաթի եզրափակիչ հանդիպումն այս տարի կկայանա Գյումրիում, ապրիլի 29-ին: Այդ օրը տեղի կունենա նաեւ Գյումրիի «Քաղաքային» վերակառուցված մարզադաշտի բացման արարողությունը:

Նշենք, որ նախկինում բացի Երեւանից, եզրափակիչ մրցախաղերը մեկական անգամ անցկացվել են Աբովյանում եւ Իջեւանում: Բացառված չէ, որ եզրափակիչում հանդես գա Գյումրիի «Շիրակը», որը գավաթի կիսաեզրափակիչում մրցելու է «Միկայի» հետ: Մյուս զույգը կազմել են «Ուլիսն» ու «Իմպուլսը»:

ՍԱՄԲՈ

## Պատվո պատվանդանին ՌԴ հավաքականի կազմում



**Ղազախստանի Ուրալսկ քաղաքում ավարտվեց սամբոյի աշխարհի գավաթի խաղարկության հերթական փուլը, որտեղ սամբիստները վիճարկեցին այդ երկրի նախագահ Նուրսուլթան Նազարբաեւի անվան մրցանակները: Հայաստանն այդ ստուգատեսում ներկայացնող արցախցի 3 սամբիստներից եւ ոչ մեկին չհաջողվեց կանգնել պատվո պատվանդանին:**

**Առավել հաջող էր 2010-ի աշխարհի եւ Եվրոպայի չեմպիոն, 82 կգ քաշային Աշոտ Դանիելյանի ելույթը, որն իրավունք էր ստացել պայքարելու բրոնզե մեդալի համար: Սակայն վճռորոշ գոտեմարտում Աշոտը զիջեց ռուսաստանցի Սերգեյ Կիրիխինին ու բավարարվեց 4-րդ տեղով: Քաշային նույն կարգում հանդես եկած Դավիթ Գրիգորյանը գրավեց 9-րդ տեղը: Նույնպիսի արդյունքի հասավ նաեւ 68 կգ քաշային Մարտին Միրզոյանը:**

**Այնուամենայնիվ, Ուրալսկում հայ սամբիստը կանգնեց պատվո պատվանդանին: Խոսքը ռուսաստանցի Էդուարդ Կուրղինյանի մասին է: 25-ամյա սամբիստը մինչեւ 100 կգ քաշայինների եզրափակիչում պարտության մատնեց ղազախ Նուրսուլթան Իմանգազին ու դարձավ մրցաշարի հաղթող: Կուրղինյանը վաստակեց 16 միավոր: Նշենք, որ աշխարհի գավաթակիր է հռչակվում 4 փուլերի ընդհանուր արդյունքով առավելագույն քանակի միավորներ վաստակած սամբիստը:**

## Գալոյանն ու Դոլուխանովան հաղթեցին

Մոսկովյան շախմատային մրցաշարի 3-րդ տուրում Հայաստանի 2 ներկայացուցիչներն էլ հաղթանակ տարան: Լիլիթ Գալոյանը պարտության մատնեց ՖԻԴԵ-ի վարպետ Օլգա Գրիգորեւային, իսկ Եվգենիա Դոլուխանովան հաղթեց Եկատերինա Դյակոնովային: 3 տուրից հետո Լիլիթն ունի 2,5 միավոր, Դոլուխանովան՝ 2:

Իսկ ահա առաջատարների խմբում գտնվող հայազգի 2 շախմատիստուհիների համար տուրն այնքան էլ հաջող չէր: Կարինա Համբարձումովան 2 անընդմեջ հաղթանակներից հետո ոչ-ոքի խաղաց Սոֆիա Զիզլովայի հետ, իսկ մյուս առաջատար Մարինե Գրիգորյանը պարտվեց Բահրա Կովանովային:

Ուսանող գրոսմայստերների մրցաշարում Ավետիք Գրիգորյանը հաշտություն կնքեց Յարոսլավ Ժերեբուխի հետ:

3 տուրից հետո Գրիգորյանը վաստակել է 1,5 միավոր: Առաջատարներն են 2,5-ական միավոր վաստակած ամերիկացի Ռեյ Ռոբսոնը եւ ռուսաստանցի Մաքսիմ Մատլակովը:

## Սերգեյ Մովսիսյանը հետապնդում է առաջատարին



Ջիբրալթարի շախմատի մրցաշարի 7-րդ տուրը հաջող էր հայ շախմատիստների համար: Սերգեյ Մովսիսյանը սեւերով հաղթեց Ռուբեն Ֆելգաերին, իսկ Գաբրիել Սարգսյանը պարտության մատնեց Մորալես Վալիոնդոյին: Վարուժան Հակոբյանը հաշտություն կնքեց Սալեհ Սալեմի հետ:

7 տուրից հետո Սերգեյ Մովսիսյանը 5,5 միավորով բաժանում է 2-11-րդ տեղերը: Վարուժան Հակոբյանը 5 միավորով ընթանում է 21-րդ տեղում, իսկ Գաբրիել Սարգսյանը 4,5 միավորով 43-րդ տեղում է:

Մրցաշարի միանձնյա առաջատարն անգլիացի Մայքլ Ադամսն է, որն ունի 6 միավոր: Նա պարտության մատնեց Դավիթ Հովելին: Մեծ հետաքրքրությամբ էր սպասվում աշխարհի ներկայիս չեմպիոնուհի Հոու Յիֆանի մրցախաղը շախմատիստուհիների աշխարհային դասակարգման ցուցակի առաջատար Հուդիթ Պոլգարի հետ: Յիֆանը հաղթեց ու 5,5 միավորով մտավ առաջատարների շարքը:

## Ձյուդոյիստներն անհաջող ելույթ ունեցան

Թբիլիսիում անցկացված ձյուդոյի աշխարհի գավաթի խաղարկության հերթական փուլում Հայաստանը ներկայացրած 10 ձյուդոյիստներից եւ ոչ մեկին չհաջողվեց մրցանակակիր դառնալ: Առավել հաջող հանդես եկավ մինչեւ 100 կգ քաշային Հակոբ Առաքելյանը, որը գրավեց 7-րդ տեղը:

Սոֆիայում ավարտված ձյուդոյի կանանց մրցաշարում մեր հանրապետության երկու պատվիրակներ Գայանե Հարությունյանը (48 կգ) եւ Ժաննա Ստանկեւիչը (57 կգ) առաջին իսկ գոտեմարտում պարտություն կրեցին: Նշված 2 մարզուհիները, ինչպես նաեւ Հովհաննես Դավթյանն (60 կգ) ու Արմեն Նազարյանը (66 կգ) կմասնակցեն փետրվարի 4-5-ը Փարիզում կայանալիք «Մեծ սաղավարտի» մրցաշարին:

*Էջը պատրաստեց* **ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ**

ԱԶԳ **Օրվա հետքերով**

# ԵՄ. Ֆրանսիային Թուրքիայով փոխարինելու կոչերը ճիշտ չեն

Դժվար է պատկերացնել, որ արտաքին քաղաքական զարգացումներին հետեւող որեւէ մեկը կարող է այնպիսի համառությամբ եւ անգրագետ ներկայանալով պահանջներ ներկայացնել, ինչպես դա արվում է ադրբեջանական ու թուրքական որոշ դրդիչների կողմից ԵԱՀԿ Մինսկի խմբում այս կամ այն համանախագահող երկրի առնչությամբ ինչ-որ բան փոխելու ցանկությամբ:

Ֆրանսիայի Սենատում ցեղասպանությունների հերքումը քրեականացնող օրենքի ընդունումից հետո էլ այս անձանց ձայներն առավել բարձր են հնչում` մեկնաբանությամբ, թե Ֆրանսիան անաչառ չէ եւ պետք է նրան փոխարինել Թուրքիայով: Որ նման անհեթեթ հայտարարություններ անողները անաչառ կարող են համարել մի երկիր, որ իսկի շփման եզր չունի Հայաստանի հետ, թող մնա իրենց գիտակցությանը: Սակայն երբ այս փոխատեղումը տեսնելու ցանկությամբ սրան-նրան են դիմում, դա արդեն զավեշտ է, հատկապես որ ում էլ դիմեն` նույն Ադրբեջանի նախագահին ամեն առիթի դեպքում հանգիստ ստորագրում է թղթերի տակ` համաձայնելով, որ ԵԱՀԿ Մինսկի խմբի ձեւաչափին այլընտրանք չի կարող լինել: Ստորագրում է, բայց...

Հերթական անգամ ադրբեջանական լրատվամիջոցներին այս հարցի առնչությամբ պարզաբանում է տվել Ադրբեջանում Եվրոմիության ներկայացուցչության ղեկավար **Ռոլան Կոբիան:** Ադրբեջանական եւ թուրքական կողմերից Ֆրանսիային փոխարինելու հայտարարությունների առնչությամբ Կոբիան նշել է. «Կարծում եմ, վերջին օրերի նմանօրինակ հայտարարություններն ու ելույթները շատ հեռուն ու խորն են գնացել, ես չեմ կարծում, որ դա ճիշտ է ու արտացոլում է իրականությունը»:

Եվրոպացի դիվանագետի խոսքերով, որ ներկայացնում է 1news.az գործակալությունը, որեւէ պարագայում Ֆրանսիայի հետկանչումը ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների կազմից կարող է որոշել միայն նույն Մինսկի խումբը: Եվրոմիությունը տվյալ դեպքում չի կարող միջամտել, քանի որ Ֆրանսիայի ներգրավվածության հարցը որոշվել է այդ երկրի մակարդակով: Այդուհանդերձ, ըստ Կոբիայի, Եվրոմիությունը կցանկանար համանախագահների համատեղ աշխատանքի արդյունքը տեսնել, թեեւ փաստ է, որ նրանք ակտիվ աշխատում են, կազմակերպում նախագահների հանդիպումներ, նախագահներն էլ շարունակում են հանդիպել, «ինչն ինքնին հուսալի ցուցանիշ է»:

**Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

ԱՆԿԱՐԱ

# «Բոլորս հայ չենք, փառք Տիրոջը, մահմեդական ենք»

**Այդ մասին, ինչպես հունվարի 29-ին կայքէջում նշել էր CNN-Turk-ը, «Ժողովրդի ձայն» կուսակցության Անկարայի վարչության նիստում, որին մասնակցել է նաեւ Թուրքիայի նախագահ Աբդուլլահ Գյուլը, հայտարարել է քաղաքական այս կազմակերպության նախագահ Նուման Քուրթուլմուշը:**

**Գյուլից հետո բարձրանալով ամբիոն, նա սկզբում անդրադարձել է այն 30 երիտասարդների խնդրին, որոնք Կեսարիայում իսրայելական կանանց բասկետբոլի թիմի հետ թուրքականի հանդիպման ժամանակ «Կորչի Իսրայելը» վանկարկելու համար ձերբակալվել էին: Ապա նրանց դեմ հարուցվել էր քրեական գործ, որը սակայն կարճել էր դատական նիստի նախագահը, պատճառաբանելով, թե այս կարգախոսը որեւէ առնչություն չունի կրոնական եւ էթնիկ խտրականության հետ, իսկ «կորչի» արտահայտությունը` անարգանքի, քանի որ չքվել է նշանակում, ուստի անեծք պետք է համարվի:**

**Քուրթուլմուշը նախ արդարացրել է այս այլասյաց թափթփուկներին, ընդգծելով, որ նրանք ազատ են արձակվել կուսակցության իրավաբանների անմիջական միջամտությամբ եւ դրանով կանխվել է մի մեծ խայտառակություն: Այնուհետեւ նա ասել է. «Քուրքան Դողանը 19 տարեկան էր, երբ նահատակվեց «Մավի Մարմարա» նավի տխտսակամածում: Կեսարիայի միջադեպը անարգանք էր նրա նրա նահատակությանը: Հնարավոր եղավ ժամանակին գործը կարճել եւ խուսափել խայտառակությունից»:**

**Այնուհետեւ «Ժողովրդի ձայն» կուսակցության նախագահն անդրադարձել է հանգուցյալ Հրանտ Դինքի գործին: Նա մասնավորապես ասել է. «Հրանտ դինքին սպանել են այն մութ ուժերը, որոնք մարդու ազատություններին դեմ են մեր երկրում: Այս մութ սպանության բացահայտմանը նպաստելու համար պարտավոր ենք պաշտպան կանգնել տուժող կողմին: Սակայն որոշ չարանենգներ այն տպավորությունն են ստեղծում, թե Դինքի գործը «Բոլորս հայ ենք» կարգախոսի պատճառով չի հետաքրքրում հավասացյալ զանգվածին: Բոլորս հայ չենք, փառք Տիրոջը, բոլորս մահմեդական ենք, այդ իսկ պատճառով էլ տեր ենք կանգնելու Հրանտ Դինքի գործին»:**

**Հ. ՉԱՔՐՅԱՆ**

# Ինչպես երեխաներին սովորեցնել ճիշտ արժեքներ

## *«Գարդիան»-ը ներկայացնում է Մարկ Բրանդերբուրգի 10 ամենաարդյունավետ ուղիները*



**Այսօրվա սպառման վրա հիմնված հասարակության մեջ, որն այնպիսի արժեքներ է հրամցնում, որոնք չեն արտացոլում այն, ինչին դուք հավատում եք, ինչպե՞ս կարող են ծնողները իրենց երեխաներին սովորեցնել ճիշտ արժեքները: Ստորեւ ներկայացնում ենք 10 կետեր, որոնք կօգնեն ձեզ այդ հարցում:**

**1. Պատմեք նրանց ձեր կյանքից եւ սովորեցրեք նրանց ձեր կյանքի պատմությունների միջոցով:**

**Երեխաները սիրում են լսել պատմություններ ձեր մանկությունից: Հնարեք խրատական դիլեմաներ, եւ դրանք մեծ հնարավորություն կընձեռեն սովորեցնելու ձեր երեխաներին արժեքների մասին: Սա շատ ավելի արդյունավետ է, քան ձեր երեխաների գլխին քարոզ կարդալը:**

**2. Ապրեք ձեր կյանքը` ըստ ձեր արժեքների:**

**Երեխաները սովորում են կրկնօրինակելով` մանավանդ վաղ տարիքում: Նրանք շատ ուշադիր են եւ տեսնում են, թե արդյոք այն, ինչ ասում եւ անում եք, համապատասխանո՞ւմ են իրար: Մի տվեք նրանց մոլորեցնող ազդանշաններ եւ ամեն վայրկյան հետեւեք ձեր արժեքներին:**

**3. Ծանոթացրեք նրանց ձեր կրոնին կամ հավատքին:**

**Այսօր հատկապես կարեւոր է դառնում` նրանք իմանան, որ մենակ չեն: Ձեր երեխաներին ծանոթացնելով հավատքի որեւէ համայնքի հետ, կուժեղացնեք նրանց արժեքները եւ որոշ «լծակներ» ձեռք կբերեք:**

**4. Ուշադրություն դարձրեք, թե էլ ո՞վ կարող է ձեր երեխաներին արժեքներ սովորեցնել:**

**Ճանաչեք ձեր երեխայի ուսուցչին, մարզչին, բարեկամներին եւ այլն: Այն բոլոր մարդիկ, ովքեր ձեր երեխայի հետ ժամանակ են անցկացնում, կարող են ազդեցություն ունենալ նրա վրա: Իմացեք նաեւ վերջիններիս արժեքների ու հավատքի մասին:**

**5. Ձեր երեխաներին հարցեր տվեք, որոնք կխթանեն երկխոսությունը արժեքների մասին:**

**Ասել, թե նրանց ինչ արժեքներ են պետք, այնքան էլ արդյունավետ չէ, մանավանդ, երբ ձեր երեխաները մեծանում են: Նրանց հետաքրքրական հարցեր տալով` քննարկումներ կսկսվեն, որոնք էլ վերջիվերջո կհանգեցնեն արժեքներին: «Ի՞նչ ես մտածում այդ կռվի մասին»-ը հնարավոր է, որ ավելի արդյունավետ լինի, քան`«Նա չպետք է սկսեր այդ կռիվը»:**

**6. Արժեքների մասին խոսեք հանգիստ եւ հեշտ եղանակով:**

**Ոչինչ այնքան վատ չի ազդում երեխաների վրա, որքան արժեքների հարկադիր քարոզումը: Խոսեք նրանց հետ, երբ բոլորը հանգիստ են. դա արեք թեթեւ, խոսակցական տոնով: Այս դեպքում ավելի հավանական է, որ նրանք ձեզ կլսեն` արհամարհելու փոխարեն:**

**7. Կարդացեք հեքիաթներ, երբ նրանք ավելի փոքր են:**

**Հեքիաթները գրավում են երեխաների երեւակայությունը եւ կարող են հեշտությամբ հանգեցնել արժեքների քննարկմանը: Երեխաները կընդունեն նույնիսկ ամենակարեւոր արժեքները, երբ նրանք հյուսված են թեմայով:**

**8. Ձեր երեխաներին ներգրավեք արվեստների, որեւէ այլ գործունեության, կամ օրինակ` ուրիշներին օգնելու մեջ` միաժամանակ սահմանափակելով հեռուստացույցը եւ համակարգչային խաղերը:**

**Երեխաները սովորում են արժեքները, երբ առնչվում են դրանց: Թույլ տվեք, որ նրանք ուրիշներին օգնեն: Ներգրավեք նրանց այնպիսի ակտիվ գործունեության մեջ, որը կընդլայնի նրանց ստեղծագործական միտքը:**

**9. Տանը հաճախ խոսեք արժեքների մասին:**

**Այս ձեւով երեխաները կհասկանան, որ դա շատ կարեւոր է, եւ ուղղակի սովորական կշտամբանք չէ, երբ նրանք ինչ-որ սխալ բան են անում:**

**10. Մեծ ակնկալիքներ ունեցեք ձեր երեխաների արժեհամակարգից:**

**Երեխաները կձգտեն հասնել այն մակարդակին, որը դուք նրանցից ակնկալում եք: Նրանց արժեհամակարգը հաճախ կարտացոլի ձերը, եթե ակնկալիքները մեծ են:**

**Թարգմ.**
**ԼՈՒՍԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԸ**

# Իրանի դեմ ԵՄ-ի պատժամիջոցները հազիվ թե նպատակին ծառայեն

*1-ին էջից*

Դրանով ներմուծող երկրները զրկվում են Պարսից ծոցից նավթ ներկրելու, իսկ Ծոցի երկրները` վերջիններիս մատակարարելու հնարավորությունից: Էլ չենք խոսում մի քանի օրում գների կրկնապատկման մասին, որովհետեւ անցյալ տարվա վերջին Հորմուզը փակելու Իրանի սպառնալիքը բավական էր, որ նավթի մեկ բարելի գինը միջազգային շուկայում 85 դոլարից բարձրանա 100-ի:

Թեեւ Իրանը եկամուտների 60 տոկոսը նավթից է ստանում, սակայն իրանական նավթի 85 տոկոսը ներկրում են Չինաստանը, Հնդկաստանն ու Ճապոնիան: Այսինքն` իրանական նավթի ներմուծումն արգելող ԵՄ-ի երկրների մասնաբաժինը մոտ 15 տոկոս է: Նրանցից Հունաստանը, Իտալիան, Պորտուգալիան եւ Իսպանիան տնտեսաֆինանսական խորը ճգնաժամ են ապրում:

Ակնհայտ է, որ այս ճգնաժամը ոչ միայն խոչընդոտում է ԵՄ-ի կայացումը որպես ինքնուրույն քաղաքական բեւեռ, այլեւ ճգնաժամի սպառնալիքի տակ դնելով եվրոպական այս կառույցին, լրջորեն սպառնում է նրա գոյությանը:

Պատժամիջոցները Իրանի համար նորություն չեն: 2006-2010 թթ. միջազգային ծրագրի պատճառաբանությամբ նրա նկատմամբ 4 պատժամիջոցներ են կիրառվել: Դրանցից երկուսի հետեւանքով արգելվել է Իրանին զենքի վաճառքը, մեկը համատեղ ջանքերով ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդում չեզոքացրել են Ռուսաստանն ու Չինաստանը, մյուսն էլ ի չիք է դարձրել Իրանը, անտեսելով միջուկային ծրագիրը ընդհատելու պահանջը:

Թվում է թե ԵՄ-ի, առավել եւս` պատժամիջոցների խստացման համար այս կառույցին ողջունող ԱՄՆ-ի խնդիրը իրանական նավթը չէ, ոչ էլ Իրանի միջուկային զենք ստեղծելու հավանականությամբ պայմանավորվող «անվստահելիությունը», այլ տարածաշրջանում առկա Սիրիա-Իրան առանցքը, կամ ռազմաքաղաքական լարվածության հարատեւումն այս առանցքը չեզոքացնելու ձեռնարկումներով ապահովելը:

Առանցքի չեզոքացման դեպքում Սիրիան, զրկվելով Իրանի աջակցությունից, լիարժեք կմեկուսացվի տարածաշրջանում, Իրանն առավել եւս, որովհետեւ «Իսլամական ջիհադի», «Հըզբոլլահի», «Համասի» վրա նա իր ազդեցությունը տարածում է Սիրիայի միջոցով, շնորհիվ վերջինի` շփվում է Լիբանանի ու Պաղեստինի հետ, եւ ռազմաքաղաքական ներկայություն ապահովում Արեւելյան Միջերկրականում, ինչպես նաեւ հարաբերվում է արաբական աշխարհի հետ: Ի դեպ, Ռուսաստանի հետ Իրանի մերձեցմանը նույնպես Սիրիան էր նպաստել:

Նպատակին կծառայե՞ն Իրանի դեմ ԵՄ-ի պատժամիջոցները, կամ կհաջողվի՞ Արեւմուտքին չեզոքացնել Սիրիա-Իրան առանցքը, ցույց կտա ժամանակը: Բայց որ այս երկու երկրների` Սիրիայի ու Իրանի ներքաշումը Արեւմուտքի հետ Ռուսաստանի ու Չինաստանի մրցապայքարում, կոնֆլիկտային լրացուցիչ պաշարներ է ստեղծում տարածաշրջանի համար, ակնհայտ է:

## Հայտարարություն

ՀՀ Գեղարքունիքի մարզի Վ. Գետաշենի գյուղապետարանի շենքում 2012 թ. փետրվարի 10-ին ժամը 10:00-ին կայանալու է Վ. Գետաշեն համայնքի սեփականություն հանդիսացող մսուր-մանկապարտեզի կաթսայատան օտարման մրցույթ: Մրցույթի է դրվել 05-087-068-002 կաթսայատունը` մեկնարկային գինը 455000 (չորս հարյուր հիսունհինգ հազար) ՀՀ դրամ: Կաթսայատունը գտնվում է ՀՀ Գեղարքունիքի մարզի Վ. Գետաշեն համայնքի Բ թաղ. 11 փող. թիվ 1/2 հասցեում «Կաթսայատուն»:

Հայտերը ընդունվում են ամեն օր ժամը 10:00-17:00-ն, մինչեւ 2012 թ. փետրվարի 6-ը ներառյալ:

Լրացուցիչ տեղեկությունների համարել դիմել Վ. Գետաշենի գյուղապետարան. Բ թաղամաս 1-ին փողոց թիվ 46 հասցեում, մրցութային հանձնաժողովին, հեռ. 0262 6-00-03:

*Վ. ԳԵՏԱՇԵՆԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ*

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ` 58-29-60

Լրատուական գործունէութիւն իրականացնող` «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը` 02 Ա N 047261, տրուած` 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ` 3000, ստորագրուած է տպագրութեան` 31.1.2012, գինը` 100 դրամ, տպագրւում է «Նոյեան Տապան» ՍՊԸ տպարանում` Իսահակեան 28: